




**«ՆԱՅԱՍԱՆԻ  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՅԻԱ  
ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ՆԱՅԱՍԱՆԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆԻՄՆԱԴՐԱՄ**



**ՆԱՅԱՍԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ  
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ**

**«ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.  
ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 1-ԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Երևան-2005

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՆԱԽԱԲԱՆ** ..... 2

**ՊԵՐՃ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Ներածություն ..... 3  
ՀՀ դատական համակարգը, զարգացման հեռանկարները ..... 4  
Օգտագործված գրականության ցանկ ..... 10

**ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Ներածություն ..... 11  
ՀՀ սահմանադրական փոփոխություններն ու ՀՀ դատական համակարգը ..... 12  
ՀՀ ընթացիկ օրենսդրությունը և ՀՀ դատական համակարգը ..... 14  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ դատական համակարգը ..... 16  
Օգտագործված գրականության ցանկ ..... 18

**ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ներածություն ..... 19  
Նկարագրական մաս ..... 19  
Եզրափակիչ մաս ..... 27  
Օգտագործված գրականության ցանկ ..... 27

**ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Ներածություն ..... 28  
Նկարագրական մաս ..... 29  
Եզրափակիչ մաս ..... 36  
Օգտագործված գրականության ցանկ ..... 36

**ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Ներածություն ..... 38  
Նկարագրական մաս ..... 39  
Դատական իշխանությունը և դատական համակարգը ՀՀ-ում ..... 39  
Դատական իշխանությունը և դատական համակարգը ըստ  
Սահմանադրական փոփոխությունների ..... 46  
Եզրափակիչ մաս ..... 47  
Դատական համակարգի զարգացման հեռանկարները ..... 47  
Օգտագործված գրականության ցանկ ..... 48

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Գաղտնիք չէ, որ մարդու իրավունքներն ու օրինական շահերը ավելի շատ պաշտպանված են այն երկրներում, որտեղ գործում է հնարավորին չափ կատարյալ օրենսդրություն, իսկ դատական իշխանությունն ու դրա կրողը հանդիսացող դատական համակարգը գտնվում են իրենց բարձրության վրա: Ուստի, զարգացած և կայացած դատական համակարգի առկայությունը վկայում է երկրում ժողովրդավարական, իրավական պետությանը բնորոշ որակների գոյության, քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների պաշտպանվածության մասին: Այս տեսակետից, հաշվի առնելով դատական համակարգի կարևորությունն ու մեծ նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում, այսօր իրենց ժողովրդավարական համարող բոլոր պետություններն էլ շահագրգռված են ընդարձակ բարեփոխումներ իրականացնել նշված ոլորտում:

Բնականաբար, այդ գործընթացներից անմասն չի մնում նաև Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Մանավանդ, հասարակական հարաբերությունների զարգացման արդի ժամանակաշրջանում, երբ մեր երկրում ընթանում են սահմանադրական բարեփոխումներին ուղղված բազմաբնույթ գործընթացներ, առավել ակտուալ և հրատապ է դառնում ՀՀ դատական համակարգում բարեփոխումների իրականացման խնդիրը: Նման փոփոխությունների կատարումը ենթադրում է ոչ միայն պետական իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց՝ օրենքով սահմանված լիազորությունների իրացում, այլ նաև լայն հասարակության ներգրավումն ու ջանքերի ուղղումը համապատասխան պրոցեսներին: Այստեղ հատկապես խոսքը վերաբերում է երիտասարդ իրավաբաններին՝ որպես ապագա մասնագետների, որոնք իրենց գիտակրթական ու հասարակական ակտիվությամբ օժանդակում են ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ու պետաիրավական մի շարք ինստիտուտների զարգացմանն ու կայացմանը:

Այսպիսով, ի նկատի ունենալով նոր սերնդի իրավաբանների մասնակցության կարևորությունը դատաիրավական բարեփոխումներին՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և նրա գործընկերները կազմակերպեցին և անցկացրին «Դատական համակարգ. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով հանրապետական գիտաժողովը, որին մասնակցեցին մի շարք իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողներ: Գիտաժողովի նպատակն էր բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը դատական համակարգի բնագավառում, հիմքեր ստեղծել դատաիրավական համակարգի բարեփոխումներին նրանց մասնակցությունն ապահովելու համար:

Սույն գրքույկում զետեղված են գիտաժողովի բանավոր փուլի մասնակիցների լավագույն զեկույցները՝ ըստ գիտաժողովի պաշտոնական արդյունքների: Այստեղ տպագրված զեկույցներում իրավաբան ուսանողները անդրադառնում են դատական համակարգում առկա և դատարանների գործունեության հետ կապված խնդիրներին, համապատասխան իրավական ակտերի թերություններին և բացթողումներին, ինչպես նաև ներկայացնում են իրենց կարծիքներն ու առաջարկությունները դատական համակարգի ոլորտում օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ:

Գրքույկի հրատարակումը նպատակ է հետապնդում բարձրացնել իրավաբան ուսանողների և իրավաբանությամբ հետաքրքրվող անձանց գիտակրթական մակարդակն ու իրավագիտակցության աստիճանը քննարկվող բնագավառում, ինչպես նաև ինչ-որ չափով նպաստել դատաիրավական բարեփոխումներին՝ դատական համակարգի և դատարանների գործունեության մասով: Սույն գրքույկն անվճար կտարածվի իրավաբան ուսանողների, երիտասարդ իրավաբանների ու իրավաբանությամբ հետաքրքրվող այլ անձանց, ինչպես նաև մի շարք շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների շրջանում:

*Լյուդվիգ Դավթյան*  
*ՀԵԻԱ Իրավաբան ուսանողների բաժանմունքի ղեկավար*

## Ներածություն

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության կարևորագույն երաշխիքն է երկրում կայացած դատական համակարգ ունենալը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ասված է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի դատաքննության իրավունք»:

Այս նույն սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածում, սակայն ավելի լայն ձևակերպմամբ: Մեր երկրի հիմնական օրենքը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ, անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Ինչպես կարելի է նկատել, մեր Սահմանադրությունը, հիմնվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի հանրաճանաչ այդ դրույթի վրա, յուրաքանչյուր անձի համար ճանաչել է արդար դատաքննության իրավունքը: Այդ իրավունքի սահմանադրորեն ամրագրումը իր հերթին լրացուցիչ երաշխիք է՝ բացառելու օրենքով կամ իրավական այլ ակտով դրա ցանկացած սահմանափակում: Այդ իրավունքի սահմանափակումը բացառել է նաև ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածը:

Իրավունքների և պարտականությունների միասնության գաղափարի համաձայն՝ յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունքի համապատասխանում է մի որևէ սուբյեկտիվ պարտականություն, և ընդհակառակը՝ յուրաքանչյուր սուբյեկտիվ պարտականության համապատասխանում է մեկ այլ սուբյեկտի համապատասխան իրավունքը: Այսինքն՝ չկա իրավունք՝ առանց պարտականության, և պարտականություն՝ առանց իրավունքի: Սա է այն չափանիշը, որով իրավունքը տարբերվում և տարանջատվում է ազատությունից:

Արդար դատաքննության իրավունքը վերոհիշյալ կանոնից բացառություն չի կազմում. այդ կանոնը բացառություններ չունի: Հետևաբար, երբ ասում ենք, որ յուրաքանչյուր ոք ունի արդար դատաքննության իրավունք, սպա անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու, թե ինչպիսի պարտականություններ են համապատասխանում այդ իրավունքին, և որ սուբյեկտներն են կրում այդ պարտականությունները:

Ինչպես ցանկացած այլ իրավունքի, արդար դատաքննության իրավունքի միայն ամրագրումը նույնպես բավարար համարվել չի կարող: Իրավունքն իմաստավորվում և արժեքավորվում է դրա իրականացման մեխանիզմների նախատեսման և ապահովման միջոցով միայն:

Արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը հետևում է ինչպես վերոհիշյալ եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի բովանդակությունից: Այն առաջին հերթին ներառում է այնպիսի դատարանների առկայությունը որոնք ստեղծված են օրենքի հիման վրա, դատարանի անկախության ապահովումը, դատարանի և դատավորի անաչառ և անկողմնակալ լինելու երաշխիքների ապահովումը, կոնկրետ գործերի քննության հրապարակայնության ապահովումը և այլն:

Սահմանադրությամբ ամրագրված այս սկզբունքների ապահովումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կարևորագույն խնդիրներից է, ինչին և նպատակաուղղված են դատաիրավական բարեփոխումների պետական ծրագրերը:

## ՀՀ դատական համակարգը, զարգացման հեռանկարները

Մինչև «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը՝ 1999 թվականի հունվարի 12-ը, Հայաստանում գործում էր դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված դատական համակարգը՝ Ժողովրդական դատարաններ և գերագույն դատարան՝ իր երկու կոլեգիաներով, նախագահությամբ և պլենումով: Դատական այդ համակարգին բնորոշ էր խիստ կենտրոնացվածությունը, վերահսկողության առկայությունը՝ վերևից ներքև: Օրենքով ամրագրված էր նաև դատարանի անկախության սկզբունքը, ինչը տեսականորեն ապահովված էր դատավորների ընտրովիությամբ: Սակայն այդ անկախությունը կրում էր ձևական բնույթ, ինչպես խորհրդային ժամանակաշրջանի բոլոր ընտրությունները. Կոմունիստական կուսակցության կենտրոնական և շրջանային կոմիտեները նախապես որոշում էին ամեն ինչ:

Սահմանադրության ընդունումով մեր հանրապետությունում հիմք դրվեց նոր դատական համակարգի ստեղծմանը, որը պետք է կյանքի կոչվեր ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրական ակտերն ընդունվելուց հետո:

Սահմանադրությունն ամրագրեց օրենքի գերակայության և միայն դատարանների կողմից արդարադատության իրականացման սկզբունքը, սահմանադրորեն հռչակվեցին նաև դատավարական մի շարք կարևորագույն սկզբունքներ, որոնք արդար և մրցակցային դատավարության կազմակերպման համար կարևոր նախադրյալներ հանդիսացան:

Սահմանադրությունն ամբողջովին հրաժարվեց գոյություն ունեցող դատական համակարգի տարրերից և ֆրանսիական մոդելի հիման վրա նախատեսեց եռաստիճան դատական համակարգ, որը դատական սխալների բացառման տեսանկյունից պետք է որ լիներ զգալիորեն արդյունավետ:

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Այս դրույթը նշանակում է, որ մեր հանրապետությունում ոչ մի այլ պետական մարմին կամ պաշտոնատար անձ կամ կազմակերպություն իրավասու չէ արդարադատություն իրականացնելու:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը առավել ընդարձակել է վերոհիշյալ սահմանադրական նորմը և սահմանել է, որ ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, ինչպես նաև ենթարկվել քրեական պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան: Սահմանված է նաև, որ ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

Սահմանադրությունն ամրագրել է, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններն են առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Ընդհանուր իրավասության դատարաններից բացի, մեր երկրի հիմնական օրենքը նախատեսել է նաև մասնագիտացված դատարանների ստեղծում, որոնցից առայժմ ստեղծվել է միայն տնտեսական դատարանը: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելված է սահմանադրական մակարդակով:

Դատական համակարգի եռաստիճան կառուցվածքն ապահովում է անձի կողմից իր իրավունքներին առնչվող դատական ակտը վերադաս դատական ատյան բողոքարկելու ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված իրավունքի իրականացումը:

ՀՀ դատական համակարգի սկզբնական օղակն առաջին ատյանի դատարաններն են, որոնք ըստ էության քննում են բոլոր տեսակի քաղաքացիական և քրեական գործերը, բացառությամբ տնտեսական դատարանի իրավասությանը վերապահվածների: Առաջին ատյանի դատարանում գործը քննվում և լուծվում է ամբողջությամբ: Քաղաքացիական գործերով առաջին ատյանի դատարանն իր վերջնական ակտով գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք ոչ, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը և ըստ էության լուծում տալիս գործին: Ահա այս հարցերը լուծելու համար է, որ տեղի է ունենում դատաքննությունը, և հաճախ դատավարության

մասնակիցները բավարարված չեն լինում տրված լուծումներով, գտնում են, որ իրենց իրավունքները խախտվել են և իրենք կարիք ունեն իրենց ճշմարտացիությունը ապացուցելու և մեկ հնարավորության:

Մեր երկրի դատական համակարգը դատավարության մասնակիցներին ընձեռում է այդ հնարավորությունը. մասնավորապես, նրանք իրավունք ունեն առաջին ատյանի դարարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները, վճիռներն ու որոշումները բողոքարկելու վերաքննիչ դարարան. դրանք են քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանը:

Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով, կրկնակի քննում է գործը: Փաստորեն վերաքննիչ դատարանը նույնպես գործն ըստ էության քննող դատարան է:

Ինչպես քրեական այնպես էլ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նորից լուծում է գործը՝ ելնելով դրա հանգամանքներից: Այս հանգամանքը կարևորվում է դատավարության մասնակիցների շահերի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից, քանի որ, եթե առաջին ատյանի դատարանը ինչ-ինչ պատճառներով չի եղել օբյեկտիվ և անկողմնակալ, ճիշտ չի կիչառել օրենքը կամ թույլ է տվել սխալներ, վերաքննիչ դատարանը մնում է ազատ իր գնահատականներում, չի կաշկանդվում առաջին ատյանի դատարանի եզրահանգումներով:

Քաղաքացիական գործերի վերաքննության ժամանակ, քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի իմաստով, առաջին ատյանի դատարանի վճիռն ընդհանրապես անդրադարձ չի կատարվում, դրան գնահատականներ չեն տրվում: Սակայն առաջին ատյանի դատարանի վճիռն կամ որոշմանը չանդրադառնալը, դրան գնահատականներ չտալը, մեր կարծիքով, օրենքի բացն է: Վերջին հաշվով, կողմը, որի օգտին գործը լուծվել է առաջին ատյանի դատարանում, իրավունք ունի իմանալու, թե ինչու վերաքննիչ դատարանը չի համաձայնվել առաջին ատյանի դատարանի հետևությունների հետ: Կամ առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկող կողմը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր անհամաձայնությունները հենց դատարանի վճիռի դեմ:

Այն, որ քաղաքացիական գործերի քննության ժամանակ վերաքննիչ դատարանը նոր վճիռ կայացնելիս չի բեկանում առաջին ատյանի դատարանի վճիռը, դրան գնահատականներ չի տալիս, պետք է համարել անընդունելի, քանի որ հենց այդ հանգամանքն է, որ առաջին ատյանի դատավորի համար որևէ հետևանք չի առաջացնում ըստ էության ակնհայտ սխալ վճիռ կայացումը:

Քրեական գործերի վերաքննության ժամանակ նման խնդիրների առաջացման վտանգ չկա, քանի որ քրեական դատավարության օրենսգրքը հարցը հստակորեն կարգավորել է:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ընդհանուր իրավասության դատարանների վերին օղակը սահմանվել է վճռաբեկ դատարանը, որը բաղկացած է երկու պալատներից՝ քաղաքացիական և տնտեսական գործերի և քրեական ու զինվորական գործերի: Սկզբնապես նախատեսված է եղել, որ վճռաբեկ դատարանը առաջին ատյանի դատարանների և վերաքննիչ դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների և գործն ըստ էության լուծող մյուս վերջնական որոշումների, քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և գործն ըստ էության լուծող մյուս վերջնական որոշումների դեմ բերված վճռաբեկ բողոքների հիման վրա այդ ակտերը վերանայող դատարանն է: Այսինքն՝ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռները օրինական ուժի մեջ էին մտնում հրապարակման պահից: Եվ սա պատճառաբանվում էր քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունն ապահովելու անհրաժեշտությամբ՝ այդ հարաբերությունները դատական տևական վիճարկումներից ազատելու ճանապարհով: Սակայն պրակտիկական շուտով ապացուցեց այդ տեսակետի սնանկությունը և հարկ եղավ վերականգնել վերաքննիչ դատարանի ակտերը նույնպես բողոքարկելու իրավունքը:

2000 թվականին առաջընթաց քայլ կատարվեց այս ուղղությամբ. ՀՀ քաղ. դատ. օր.-ում կատարված փոփոխություններով վերաքննիչ դատարանի վճիռների օրինական ուժի մեջ

մտնելու համար նախատեսվեց տասնհինգօրյա ժամկետ, և դատավարության մասնակիցներին հնարավորություն տրվեց այդ ժամկետի ընթացքում բողոքարկել դատական ակտը վճռաբեկության կարգով:

Այսպիսով, ստացվեց, որ վճռաբեկ դատարանը քննում է երկու տիպի բողոքներ՝ բողոքներ, որոնք բերվել են օրինական ուժի մեջ չմտած վճիռների, դատավճիռների և որոշումների դեմ և բողոքներ՝ բերված օրինական ուժի մեջ մտածների դեմ:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բաղկացուցիչ մասն է կազմում ՀՀ տնտեսական դատարանը, որի իրավասությանը ենթակա են առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի միջև ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ծագող վեճերը (տնտեսական վեճեր): Դիշտ է, տնտեսական դատարանն ի սկզբանե ուղղակիորեն նախատեսված է եղել Սահմանադրությամբ, սակայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի սկզբնական տեքստում նախատեսված է եղել միայն այդ դատարանի իրավասությանը ենթակա վեճերի շրջանակը և ոչ ավելի, իսկ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում տնտեսական դատարանի մասին ընդհանրապես ոչ մի հիշատակում չի եղել. Տնտեսական դատարանը սկզբնական շրջանում գործել է որպես տնտեսական գործերով վերաքննիչ դատարան:

2001 թվականի սեպտեմբերի 11-ին «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում և քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններով և լրացումներով սահմանվեցին տնտեսական դատարանի նոր կառուցվածքը և գործերի քննության կարգն այդ դատարանում: Դրան զուգահեռ այս դատարանի կազմում առանձնացվեցին նաև անվճարունակության գործեր քննող դատավորներ, որոնք մասնագիտացված են հատկապես նման գործերով:

Ահա այս դատարաններն են կազմում մեր հանրապետության դատական համակարգը:

ՀՀ Սահմանադրական դատարանի կարգավիճակի հետ կապված՝ գոյություն ունեն իրար տրամագծորեն հակասող կարծիքներ: Որոշ տեսաբաններ գտնում են, որ Սահմանադրական դատարանը հանդիսանում է ՀՀ դատական համակարգի բաղկացուցիչ մասը, իսկ տեսաբանների մյուս խումբը գտնում է, որ այն ոչ մի պարագայում չի կարելի դատական համակարգի մեջ մտցնել, և պետք է համարել պետական ինքնուրույն կառույց, որն ունի սկզբունքորեն այլ դեր ու նշանակություն:

«Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից ելնելով՝ կարելի է միանշանակ պնդել, որ այս օրենքը Սահմանադրական դատարանը չի դիտարկում որպես ՀՀ դատական համակարգի տարրը: Դրա վկայությունն է այն, որ օրենքի 10-րդ հոդվածում, որն անվանված է «ՀՀ դատական համակարգը», թվարկված են միայն առաջին ատյանի, վերաքննիչ, տնտեսական և վճռաբեկ դատարանները. Սահմանադրական դատարանն այդ համակարգում չի ներառված:

Այն տեսաբանները, որոնք գտնում են, թե Սահմանադրական դատարանը դատական համակարգի տարր չի կազմում, հենվում են «Դատարանակազմության մասին» օրենքի հենց այս հոդվածի վրա և պնդում, որ Սահմանադրական դատարանն արդարադատություն չի իրականացնում և այդ պատճառով էլ ոչ մի պարագայում դատական համակարգի մեջ մտնել չի կարող:

Ի հակակշիռ այդ տեսակետի՝ կարելի է վկայակոչել ՀՀ Սահմանադրությունը, որի 6-րդ գրուխն անվանված է դատական իշխանություն և դատավորն ու Սահմանադրական դատարանի անդամը բոլոր հոդվածներում հորվված են միմյանց հետ: Դրանից բացի, ՀՀ ընտրական օրենսգրքը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը ընտրությունների հետ կապված մի շարք հարցերի լուծումը վերապահել է Սահմանադրական դատարանին:

Հետևաբար, հիմնավոր է այն մոտեցումը, որ Սահմանադրական դատարանը հանդիսանում է դատական համակարգի տարր: Իսկ այն կարծիքը, թե Սահմանադրական դատարանն արդարադատություն չի իրականացնում, հիմնավորված չէ: Ի տարբերություն արտասահմանյան մի շարք երկրների, որտեղ Սահմանադրական դատարանը հանդիսանում է միայն սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին, ՀՀ Սահմանադրությունը, բացի սահմանադրական վերահսկողության ֆունկցիայից, Սահմանադրական դատարանին վերապահել է նաև հանրաքվեների, հանրապետության

Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի լուծման իրավասություն: Իսկ այն հանգամանքը, որ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, որն անվանված է «ՀՀ դատական համակարգը», դատարանների թվարկման մեջ չի նշել Սահմանադրական դատարանը, նկատի է առնվել, որ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է առանձին օրենքով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում դատական իշխանության տակ տեղավորված է նաև Արդարադատության խորհուրդը, որը չունի դատավարական որևէ իրավասություն և դատական իշխանություն է իրականացնում այնքանով, որքանով մասնակցում է դատավորների նշանակմանն ու հետկանչմանը, դատավորների կարգապահական և քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերի լուծմանը:

Որքան էլ տարօրինակ է, նույն գլխի տակ ներառված է նաև դատախազությունը, որը ոչ մի դեպքում չի կարող և չպետք է դիտվի որպես դատական իշխանության մաս:

Դատական համակարգը, ըստ էության, յուրաքանչյուր երկրում կոչված է ապահովելու անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը, և որքան անկախ, որքան անկողմնակալ է այդ համակարգը, այնքան մեծ է մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանը:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը: Մեր երկրի հիմնական օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը ժամանակակից աշխարհում հանդիսանում է ժողովրդավարական պետության հիմնաքարերից մեկը, և յուրաքանչյուր երկիր իր համար մշակել է տարանջատման սեփական մոդելը և ժողովրդական է այնքանով, որքանով իրական է իշխանությունների այդ տարանջատումը:

Երբ խոսվում է իշխանությունների տարանջատման մասին, նկատի չի ունեցվում, որ իշխանության յուրաքանչյուր ճյուղ գտնվում է առանձնացված և մեկուսի վիճակում. իրականում դրանք առանձնացված են մեկ միասնության մեջ և մեկ ամբողջություն կազմող պետական իշխանության բաղկացուցիչ մասերն են, որոնք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ՝ ինչ-որ տեղ նաև զսպելով ու հակակշռելով միմյանց:

Իշխանությունների կատարյալ տարանջատում գոյություն չունի. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կապված են իրար հետ և դրանց միջև գործում է զսպումների ու հակակշիռների որոշակի մեխանիզմ, որն էլ հենց պայմանավորում է պետական կառավարման ձևը: Դատական իշխանությունը իշխանության մնացած երկու ճյուղերից ամենախոցելին է, և զսպումների այդ մեխանիզմների ամենաչնչին խաթարումը կարող է հանգեցնել իշխանության այդ թևի անկախության անհարկի սահմանափակմանը, որն անպայման իր չափազանց բացասական հետևանքները կարող է ունենալ մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանի վրա:

Իշխանության երեք ճյուղերի միջև զսպումներն ու հակակշիռները արտահայտվում են միմյանց կազմավորման մեջ փոխադարձ մասնակցության, լիազորությունների իրականացման ընթացքում միջամտության և այլ ձևերով:

Դատական համակարգի անկախությունը ընկալվում է երկու իմաստով՝ անկախություն «ներսից» և անկախություն «դրսից»: Առաջին դեպքում նկատի է ունեցվում դատական տարբեր ատյանների միջև ենթակայության բացակայությունը, իսկ երկրորդում՝ դատարանի գործունեությանը ցանկացած կողմնակի միջամտության անթույլատրելիությունը: Սա իր արտացոլումն է գտել «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Դատավորների անկախությունը, հետևաբար, նաև դատական իշխանության անկախությունը, առաջին հերթին պայմանավորվում է դատավորի նշանակման, լիազորությունների դադարեցման՝ օրենքով սահմանված կարգով: Այդ կարգն է, որ պետք է երաշխավորի դատավորի անկախությունը պետական գործադիր մարմնից՝ բացառելով նաև



պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի միջամտության հնարավորությունը դատական գործընթացներին:

ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ Արդարադատության խորհուրդը արդարադատության նախարարի առաջարկով կազմում և հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների պաշտոնական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են դատավորների նշանակումները հանրապետության Նախագահի կողմից:

Արդարադատության խորհուրդը նախագահում է հանրապետության Նախագահը, փոխնախագահներ են արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, խորհրդի կազմի մեջ բացի դատավորներից ու գիտնական իրավաբաններից, ներգրավվում են նաև երեք դատախազ:

Եթե նկատի ունենանք արդարադատության նախարարի այս բազմաբնույթ դերը դատական իշխանության համակարգում՝ դրան գումարելով նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու բացառիկ իրավունքը, կարելի է պնդել, որ դատական համակարգը լիովին կախման մեջ է գործադիր իշխանությունից: Եվ սա այն դեպքում, երբ նույն այդ գործադիր իշխանությունը դատավարական որևէ լիազորություն չունի, չի կարող հսկողություն իրականացնել արդարադատության հարցերով և որևէ պատասխանատվություն չի կրում տվյալ համակարգում տեղ գտած բացթողումների, թերացումների ու չարաշահումների համար դատավարությանը վերաբերող հարցերում:

Փաստորեն, անցկացված դատաիրավական բարեփոխումները չեն բերել դատական իշխանության անկախության՝ ՀՀ Սահմանադրությամբ այդ անկախության երաշխիքներն ապահովված չլինելու հետևանքով: Այն խնդիրներն ու լիազորությունները, որոնք կարող էին և պետք է վերապահվեին Դատարանների նախագահների խորհրդին, դատավորների միությանը՝ հատկապես դատավորների որակավորման ստուգման, կարգապահական պատասխանատվության հարցերում, վերապահվել են գործադիր իշխանությունը:

Գործադիր իշխանությունից դատավորների կախումը վերացնել կհաջողվի միայն այն դեպքում, երբ փոխվի դատավորների նշանակման, պաշտոնական առաջխաղացման, լիազորությունների դադարեցման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ սահմանադրորեն ամրագրված կարգը: Այս հարցերի կարգավորման բնագավառում գործադիր իշխանության դերը պետք է հասցվի նվազագույնի:

ՀՀ-ում նախատեսվող սահմանադրական փոփոխություններով առաջարկված է փոփոխել Արդարադատության խորհրդի ձևավորման գործող կարգն ու կազմը, որի դեպքում այդ խորհրդում չեն լինի արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, չեն լինի նաև խորհրդի դատախազ անդամներ: Սակայն դա նույնպես խնդիրը վերջնականապես չի լուծում, քանի որ չի լուծվում նաև դատարանների նկատմամբ դատավարական հսկողության խնդիրն այն առումով, որ դատական ակտն առաջին ատյանում կայացվում է քաղաքական պատվերով և այն ուժի մեջ է թողնվում դատական հետագա ատյաններում:

Դատախազությունը շարունակում է մնալ Սահմանադրության «Դատական իշխանություն» գլխում և չի լուծվում դատախազությունից դատարանի անկախացման խնդիրը:

Մեր կարծիքով, կա անհրաժեշտություն քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսել նորմ՝ վերանայվող դատավճիռներում տեղ գտած կոպիտ սխալների համար այն կայացրած դատավորի պիտանիությանը գնահատական տալը պարտադիր լինելու մասին: Ընթացիկ տարում, անկախ սահմանադրական փոփոխությունների ընդունումից, նախատեսվում է վարչական իրավախախտումներ քննող դատարանների ստեղծում, ինչը զգալիորեն կթեթևացնի առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածությունը, կնպաստի նաև տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի վերանայմանն ու կատարելագործմանը:

ՀՀ արդարադատության նախարարությունը, թեկուզ և բացասական դեր ունի դատական համակարգի անկախության հարցերում, այնուամենայնիվ, զգալի աշխատանք է կատարել և կատարում դատարանների ֆինանսավորման, շենքերի վերակառուցման, նորերի

կառուցման ու դրանք կահավորելու, դատավորների վերապատրաստման և նմանատիպ շատ այլ հարցերում:

Այսօր մեր երկրում բավականին լայնածավալ աշխատանքներ են տարվում միջնորդ դատարանների դերի բարձրացման առումով: Չնայած այն հանգամանքին, որ այդ դատարանները իրավաբանորեն արդարադատություն չեն իրականացնում, բայց ամեն պարագայում դրանք մեծ դերակատարություն ունեն քաղաքացիական գործերի լուծման հարցերում:

Դատական համակարգում բարեփոխումների գործընթացը շարունակվում է, որոնվում է լավագույնը և արդյունավետը: Պետք է հուսալ, որ այն կգտնվի:

## Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 05.07.1995թ.)
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա» (4-րդ նոյեմբերի, 1950թ., Հռոմ)
3. «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք (ընդունված 18.06.1998թ.)
4. «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (ընդունված 17.06.1998թ.)
5. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2002թ.)
6. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 01.06.1998թ.)
7. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունված 17.06.1998թ.)
8. ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունված 05.02.1999թ.)
9. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք՝ 1997 թվականի դեկտեմբերի 9-ի խմբագրությամբ, (ընդունված 09.12.1997թ.)
10. «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.10.1995թ.)
11. «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենք (ընդունված 05.05.1998թ.)
12. ГЕГЕЛЬ, “Философия права”, Академия наук СССР, Институт Философии, издательство “Мысль”, Москва, 1990
13. Խրոպանյուկ Վ. Ն., «Պետության և իրավունքի տեսություն» (2-րդ հրատարակություն՝ լրացումներով և ուղղումներով), «Մուշ» հրատ. Եր., 1997
14. ՀՀ Դատարանների նախագահների խորհուրդ, «Դատավորի սեղանի գիրք», Գործնական ձեռնարկ, Եր., 2002
15. Պետրոսյան Ռ. Գ., «Հայաստանի քաղաքացիական դատավարություն» (երկրորդ հրատարակություն՝ լրացումներով և ուղղումներով), Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2003
16. Դիլբանդյան Ս., «ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները», ԵՊՀ հրատ., Եր., 2000

## Ներածություն

Հին հույներից, չինացիներից կամ հայերից հետո քիչ բանով է փոխվել կամ համարյա չի փոխվել մարդու էությունն ու մտածելակերպը: Ի պատիվ հոգու և մարմնի ազատության են գրվել ու նրանց են ձոնվել իրավունքի նշանավոր կոթողները: Հասարակական հարաբերությունների անընդհատ զարգացումներն, իհարկե, դարերի ընթացքում ընդլայնել են սրանց բովանդակությունը, և մարդկային համույթում դրանց լիակատար դրսևորման նոր ուղիներ են մշակվել ու մատնանշվել: «Մարդը հասարակական կենդանի է», -ասում էր Արիստոտելը: Դարեր շարունակ նա եղել է «հասարակություն» և «պետություն» շղթայի գերին ու հպատակը, իսկ այսօր ձգտում է լինել այդ նույն շղթայի լիիրավ օղակ: Այս պարագայում արդեն հասարակությունն ինքն է շահագրգռված իր անդամների ֆիզիկական և հոգևոր անխաթարության պահպանմամբ ու պաշտպանմամբ:

Համաշխարհային գլոբալացման արդյունում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգերի մշակումը այժմ վերածվել է վերպետական խնդրի: 20-րդ դարից սկսած մարդկությունը փորձեր է կատարում միավորելու իր ուժերը աշխարհը խաղաղ ու բարգավաճող դարձնելու գաղափարի շուրջ: Իհարկե, միջազգային իրավական կարգավորման ենթակա հիմնահարցերից ցանկացածը վերջին հաշվով իր դրոշմն է դնում յուրաքանչյուր աշխարհագրաքաղաքական միավորի ու դրա բնակչության սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումների վրա, սակայն յուրաքանչյուր անհատի համար շատ ավելի շոշափելի ու կենսական է սեփական անձի իրավունքների պաշտպանված լինելն այն պետության ներսում, որտեղ բնակվում է նա ու իր ընտանիքը: 18-րդ դարում Մոնտեսքյեն առաջ քաշեց իշխանությունների տարանջատման իր տեսությունը՝ ներդաշնակի ու կատարյալի ստեղծման անկեղծ մղումով: Հենց այս տեսության գործուն կայացումը կարող է հանդիսանալ իրավունքների ապահով իրականացման հուսալի երաշխիք ու առհավատչյա:

Պատմականորեն գործադիր իշխանությունը եղել է իշխանության առավել կարող թևը և միշտ էլ ձգտել է առավելագույն չափով իրադրության տերը լինել նաև իշխանության այլ ճյուղերի հետ հարաբերություններում: Հասարակական ցնցումներից ու աղետներից խուսափելու ուժեղ և գործադիր իշխանության դեմ պայքարում հզոր գործիք կարող է դառնալ դատական կայացած ու անկախ համակարգը:

Դատական իշխանության անկախության խնդիրը պետք է դիտարկել մի քանի հարթությունների վրա: Նախ՝ պետք է ապահովվի օրենսդրական անթերի դաշտ. ապա՝ սոցիալ-տնտեսական արդյունավետ հենք, նաև՝ կադրային ճիշտ ու *բարոյական* քաղաքականություն: Վերը նշվածներից վերջին երկուսը պահանջում են հսկայական ֆինանսական ռեսուրսներ, ժամանակ և մտածողության նոր կառուցակարգեր, իսկ առաջինի իրականացումը հիմա ոչ միայն անհրաժեշտ է, այլև՝ հնարավոր:

Որո՞նք են օրենսդրական կարգավորման այսօրվա թերությունները, որտեղի՞ց պետք է սկսել և դեպի ու՞ր տանել դատաիրավական բարեփոխումները և ինչպե՞ս ապահովել դրանց կենսագործումը իրական կյանքում. վերը նշված խնդիրներին կանդրադառնանք ստորև:

## ՀՀ սահմանադրական փոփոխություններն ու ՀՀ դատական համակարգ

Սահմանադրական փոփոխությունների ներկայիս գործընթացի չարչարված հարցերից է դարձել դատական համակարգի անկախության ապահովման համար սահմանադրորեն ճիշտ լուծումներ տալու խնդիրը: Այս համատեքստում Արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության կանոնակարգման հարցը առաջնային տեղ է զբաղեցնում:

Մինչև այս մարմնի գործունեության մեր տարբերակին անցնելը՝ նշենք, որ մմանատիպ մարմիններ գործում են նաև արտասահմանյան շատ երկրներում, և դրանցից ոչ բոլորի կազմավորումը և նրանց վերապահված գործառույթներն են, որ համապատասխանում են ժամանակակից իրավական չափանիշներին<sup>1</sup>: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է սահմանադրական փոփոխությունների այս փուլում մինչև անգամ վերապետական մակարդակով ընդգծվում և վերահսկվում համապատասխան լրացումներ կատարելու և բացթողումները շտկելու անհրաժեշտությունը: Խնդիրն այն է, որ իբրև հիմնական օրենք՝ Սահմանադրությունը պատմական նախասահմանամբ պետք է արտացոլի տվյալ ժամանակաշրջանի իրավական ըմբռումների լավագույն բոլոր դրսևորումը և լինի հնարավորին չափ անթերի:

Սահմանադրական փոփոխությունների ներկայիս տարբերակով Արդարադատության խորհուրդը պետք է ձևավորվի ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրված 9 դատավորներից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով, ինչպես նաև ՀՀ Նախագահի կողմից նշանակված երկուսական իրավաբան գիտնականներից: Սրա հետ կապված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 1.3 կետը սահմանում է. «Ցանկացած որոշման կայացմանը, որը կարող է վնաս հասցնել դատավորի ընտրությանը, նշանակմանը, պաշտոնավարմանը և պաշտոնաթողմանը, կարող է միջամտել անկախ մարմին, որի անդամների ոչ պակաս, քան կեսը կազմում են լայն ներկայացուցչությամբ ընտրված դատավորները»<sup>2</sup>: Արդարադատության խորհուրդը, փաստորեն, կազմավորման առումով խարտիայի պահանջների հետ հակասության մեջ չի մտնում: Հիմնական խնդիրը հանրապետության Նախագահի կողմից Արդարադատության խորհրդի կազմից դրա նախագահ նշանակելն է: Տարբեր երկրներ մմանատիպ մարմինների ղեկավարների ձևավորման սեփական հայեցակարգերն են մշակել: Օրինակ, Պորտուգալիայում այդ դերը ի պաշտոնե ստանձնում է վճռաբեկ դատարանի նախագահը:

Ընդունելի՞ է այս տարբերակը մեզ համար. բնականաբար, սակայն այս դեպքում ևս գործադիր իշխանությունն իր ձեռքում կպահի ազդեցության բոլոր լծակները՝ հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունների ուժով (հոդված 55, կետ 11), քանի որ բոլոր դատավորներին, այդ թվում վճռաբեկ դատարանի նախագահին նշանակում է հանրապետության Նախագահը:

Այս առումով կարծում ենք, որ առաջին հերթին պետք է ճշգրտել Արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների ցանկը և խորհրդատվական մարմնից վերածել այն իրական որոշումներ ընդունող և կշիռ ունեցող կառույցի: Այս իրավիճակում լուծումը Արդարադատության խորհրդին՝ ներկայումս գործադիր իշխանությանը վերապահված լիազորությունների փոխանցումն է: Մասնավորապես՝ ներկայիս իրավիճակով Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով.

<sup>1</sup> Գ.Գ.-ում, օրինակ, դաշնային դատավորների նշանակման իրավասությունը վերապահված է դաշնության պրեզիդենտին՝ համապատասխան նախարարի (Գերագույն դաշնային դատարանի դատավորի նշանակման համար՝ արդարադատության նախարարի, իսկ աշխատանքայի գործերով դաշնային դատարանի դատավորի համար՝ աշխատանքի նախարարի) որոշման հիման վրա: Դատավորի թեկնածուների նախնական ընտրությունն իրականացվում է հատուկ հանձնաժողովի կողմից, որը կազմված է Բունդեսբազի կողմից ընտրված 11 անդամներից, նախարարներից և հողերի համապատասխան կառույցների ղեկավարներից: **Տե՛ս *Правовые системы стран мира, Энциклопедический справочник // Под ред. А. Я. Сухарова. М., 2001, էջ 173:***

<sup>2</sup> Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիան ընդունվել է 1998 թվականի հուլիսի 10-ին:

1. կազմում և հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածուների և ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարում են նշանակումները,
2. եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածուների վերաբերյալ,
3. հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ,
4. դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին,
5. Արդարադատության խորհուրդը գլխավոր դատախազի առաջարկով հանրապետության Նախագահին եզրակացություն է տալիս դատավորին որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համաձայնություն տալու մասին:

Վերը նշված բոլոր դեպքերում Արդարադատության խորհրդի դերը բացահայտորեն երկրորդական է և հաճախ նույնիսկ ձևական: Եզրակացություն տալու, առաջարկ ներկայացնելու կամ կարծիք հայտնելու փոխարեն վերը նշված դեպքերում այն պետք է *որոշումներ* կայացնի և դրանց կենսագործման համար անհրաժեշտ միջոցների տիրապետի: Հանրապետության Նախագահը, օրինակ, դատավոր պետք է նշանակի այն թեկնածուին, որը կներկայացնի Արդարադատության խորհրդի կողմից: Իհարկե, Նախագահին անհրաժեշտ է վերապահել նաև վետոյի իրավունք՝ Արդարադատության խորհրդի անդամների 2/3-ի կողմից այն հաղթահարելու հնարավորությամբ<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է խորհրդի ղեկավարին, ապա նա կարող է լինել ինչպես վճռաբեկ դատարանի նախագահը, այնպես էլ խորհրդի կազմից որոշակի ժամկետով ընտրված թեկնածուն:

Կարծում ենք, որ գործնական առումով ավելի ճիշտ կլինի նաև Արդարադատության խորհրդի կազմի մեջ ընդգրկված դատավորներին պաշտոնավարման ժամկետի ընթացքում ազատել դատավորի իրենց պարտականություններից՝ հոգեբանական ճնշումներից խուսափելու և աշխատանքային չափազանց մեծ ծանրաբեռնվածությունը չեզոքացնելու նպատակով:

Արդարադատության խորհրդի լիազորությունների այսպիսի փոփոխություններն արդյոք չե՞ն հանգեցնել մեկ այլ ծայրահեղության՝ լճացման և կլանային համակարգի ստեղծման հենց դատական իշխանության ներսում: Խնդրի լուծման տարբերակ է առաջադրում Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիան. «Դատավորի կողմից որևէ պարտականության չկատարումը կարող է սանկցիաների կիրառման հանգեցնել միայն դատական մարմնի կամ այլ ինստանցիայի որոշմամբ, որի կազմի ոչ պակաս, քան կեսը դատավորներ են: Հարցի քանարկումն իրականացվում է մրցակցային սկզբունքներով՝ դատավորի և նրա ցանկությամբ՝ իր պաշտպանի մասնակցությամբ: Դատավորը կարող է *բողոքարկել որոշումը դատական բնույթի ավելի վեր կանգնած ինստանցիային*»:

Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Իսկ ինչքանով է իր այդ դերը կատարում ընթացիկ օրենսդրությունը: Զննարկենք այս հարցը ստորև:

<sup>1</sup> Բուլղարիային Հանրապետության Սահմանադրությամբ, օրինակ, Բարձրագույն վճռաբեկ և վարչական դատարանների նախագահներին ու գլխավոր դատախազին նշանակում է հանրապետության Նախագահը Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրման հնարավորության: Ընդ որում, Նախագահն իրավունք չունի հրաժարվելու նշանակումն իրականացնելուց, եթե առաջարկը կրկնվի: Տե՛ս Правовые системы стран мира, Энциклопедический справочник // Под ред. А. Я. Сухарова. М., 2001, էջ 88:

## ՀՀ ընթացիկ օրենսդրությունը և ՀՀ դատական համակարգը

Դատական ցանկացած համակարգի արդյունավետությունը ցույց է տալիս ժամանակը, իսկ գնահատում են մարդիկ: Տարբեր պետություններ մշակել են սեփական ապրելակերպին ու մշակութային նկարագրին հարիր համակարգեր: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններից բաղկացած Հայաստանի Հանրապետության դատական համակարգն ունի մի շարք թերություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից քրեական և քաղաքացիական բոլոր գործերը քննվում են միանձնյա: Համաձայնել սրա հետ, իհարկե, չի կարելի: Կատարյալ տարբերակն, անշուշտ, հնարավորինս շատ մասնագիտացված դատարանների առկայությունն է<sup>1</sup>: Այս ճանապարհին Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի ստեղծումը դրական մեծ քայլ էր: Իսկ ինչո՞ւ մասնագիտացված այլ (քրեական գործերով, անչափահասների գործերով, վարչական, ամուսնալուծման եկան գործերով և այլն) դատարաններ մեր հանրապետությունում ստեղծելն այսօր ցանկալի է, սակայն ոչ նպատակահարմար: Պատասխանն ածանցվում է անհրաժեշտ ֆինանսատնտեսական և կադրային բազայի բացակայության փաստից, ինչը, սակայն չի վերացնում առաջացած բացը լրացնելու հրատապությունը: Կախված քրեական գործերով՝ հնարավոր պատժի ծանրությունից, իսկ քաղաքացիական գործերով՝ հայցագնից՝ որոշակի գործերի քննությունն առաջին ատյանի դատարանում պետք է լինի ոչ թե միանձնյա, այլև կոլեգիալ<sup>2</sup>:

2. Առաջին ատյանի դատարանի դատավորների միջև աշխատանքը պետք է բաժանվի առարկայական սկզբունքով: Այս սկզբունքի էությունն այն է, որ դատավորը քննում է միայն քաղաքացիական կամ քրեական գործեր<sup>3</sup>: Սա որակյալ արդարադատության իրականացման առումով լուրջ խաղաքար կարող է հանդիսանալ:

3. Առաջին ատյանի դատարանները ըստ էության քննում են բոլոր քաղաքացիական, քրեական, զինվորական, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, օրենքով սահմանված կարգով *լուծում են կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, ինչպես նաև նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցերը* («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 13): Այս հոդվածի վերջին մասը ևս քննադատական տարբեր մոտեցումների տեղիք է տվել: Խնդիրն այն է, որ դատավարագետների մեծ մասը գտնում են, որ այս դեպքում դատարանի անաչառ լինելու պահանջը լուրջ հարվածի տակ է ընկնում: Օրենսդրոքն, իհարկե, այս հարցերի լուծման ժամանակ կոնկրետ անձի մեղավորության կամ անմեղության հարցերին անդրադարձ չի կատարվում, սակայն արդյունքում դատավորի մոտ կանխակալ կարծիք ձևավորվելու հոգեբանական նպաստավոր դաշտ է առաջանում: Ֆրանսիայում, օրինակ, այս հարցը լուծվում է դատավոր-քննիչների ինստիտուտի կիրառման միջոցով: Հայաստանի Հանրապետությունում կարելի է տալ խնդրի հարթման հետևյալ տարբերակները՝ կամ վերևում նշված դեպքերի քննարկումը պետք է իրականացվի համապատասխան առաջին ատյանի դատարանի կոնկրետ դատավորների կողմից՝ գործերի բաշխման առարկայական սկզբունքից ելնելով, կամ էլ արգելվի այդ դատավորի մասնակցությունը տվյալ հարցերի հետ կապված քրեական գործերի դատական քննությանը:

Որքան էլ որ կառուցվածքային առումով կատարյալ լինի դատական համակարգը, այն չի կարող երբեք կատարել արդարադատության կոթողի իր դերը՝ առանց որակյալ և նվիրված կադրերի՝ դատավորների, որոնց բարոյական բարձր հատկանիշներից, կրթական

<sup>1</sup> Մասնագիտական դատարանների զարգացած ցանցեր ունեն այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Գ-Գ-Հ-ն, Իսպանիան, Իտալիան: Տե՛ս **Маклаков В. В. Иностранное конституционное право, М., 1996:**

<sup>2</sup> Ֆրանսիայում այս մեխանիզմը գործում է փոքր և մեծ տրիբունալների դատարանների ձևով: Տե՛ս Ս. Դիլբանդյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2000, էջ 202:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Դիլբանդյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2000, էջ 63:

մակարդակից ու գիտելիքներից, ֆիզիկական, հոգեբանական ու սոցիալական պաշտպանվածությունից ամիջականորեն կախված է անհատի վստահությունն ու վճռականությունը ցանկացած իրավիճակում ապավինելու դատական իշխանության ուժին և արդարությանը:

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը սահմանում է երաշխիքների մի ամբողջ համակարգ, որոնք կոչված են բավարար պայմաններ ապահովելու արդարադատության իրականացման համար: Ընդ որում, երաշխիքների այս համալիրը կրում է երկկողմանի բնույթ և բխում է ինչպես հասարակության ու անհատի, այնպես էլ իշխանության այս թևի շահերից: Գործող օրենսդրությունից ելնելով՝ առանձնացվում են դատավորների անկախության հետևյալ երաշխիքները.

- դատական համակարգի կազմավորումը,
- դատավորի գործունեությանը միջամտության անթույլատրելիությունը,
- պատասխանատվությունը դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար,
- դատավորի անփոփոխելիությունը,
- դատավորի անձեռնմխելիությունը,
- դատավորի հրաժարականի իրավունքը,
- օրենքով սահմանված կարգով դատավորի լիազորությունների դադարեցումը, դատավորի ապաքաղաքականացվածությունը, դատական գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները,
- դատավորի աշխատաքային այլ գործունեության այլ երաշխիքներ,
- արդարադատություն իրականացնելն օրենքով սահմանված դատաիրավական կարգով<sup>1</sup>:

Դատական համակարգի ձևավորման նոր կարգ սահմանելու և դատավորին իր կապակցությամբ ընդունված որոշումները բողոքարկելու իրավունք վերապահելու անհրաժեշտության մասին արդեն խոսվել է: Այստեղ ուզում ենք անդրադառնալ նաև դատավորների պաշտոնեական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ցուցակների՝ Արդարադատության նախարարության կողմից ձևավորելու փաստին: Կարծում ենք, որ դատավորների թեկնածուներ ընտրելու իրավասությունը պետք է վերապահվի անկախ ժյուրիին, որը պետք է կազմված լինի համապատասխան գիտական ու գործնական մակարդակ ապահովող մասնագետներից:

Միավրված չենք լինի, եթե անդրադառնանք նաև դատավորների թեկնածուների ուսուցման և դատավորների վերապատրաստման խնդրին: «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով՝ դատավորի պարտականությունների մեջ ներառված է նաև հետևյալ կետը՝ դատավորը պարտավոր է հոգ տանել իր մասնագիտական գիտելիքների մակարդակի և աշխատանքային որակի բարձրացման ուղղությամբ («Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 14): Հարց է ծագում՝ իսկ պետությունն ինքը պարտականություն չի՞ կրում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու դատական համակարգը որակյալ կադրերով համարելու և նրանց մասնագիտական գիտելիքների ու հմտությունների անդադար աճ և զարգացում գրանցելու ուղղությամբ: Կարելի է առաջարկել հետևյալ ելքը. պաշտոնեական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ցուցակներից դատավոր նշանակված անձինք պետք է որոշակի ժամանակահատվածով հատուկ ուսումնագործնական կուրսեր անցնեն այդ նպատակով ստեղծված համապատասխան կրթական հաստատությունում, որը կգտնվի Արդարադատության խորհրդի անմիջական վերահսկողության ներքո: Նպատակահարմար կլինի նաև նույն հաստատության կողմից դատավորների հետագա վերապատրաստման կազմակերպումը և իրականացումը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես Ս. Դիրանդյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2000, էջ 91:

<sup>2</sup> Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի 2.3 հոդվածի համաձայն՝ դատավորի կարգավիճակը ապահովում է ընտրված թեկնածուի նախապատրաստումը իր ֆունկցիաների գործնական իրականացմանը՝ պետության կողմից վճարվող համապատասխան կրթության միջոցով: Համապատասխան անկախ ինստանցիան հսկողություն է իրականացնում կրթական ծրագրերի և դրանք իրագործողների նկատմամբ:



Անհիմն չի լինի նաև դատավորի թեկնածուին «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքով առաջադրվող պահանջների մասին խոսելը: Դրանք են՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
2. քսանհինգ տարին լրացած լինելը,
3. բարձրագույն իրավաբանական կրթությունը,
4. իրավաբանի՝ առնվազն երեք տարվա ստաժը:

Կարծում ենք, որ ցանկացած անհատ իբրև դատավոր հանդես գալու համար կենսափորձի ու աշխատանքային գործունեության ավելի երկարատև ընթացքի կարիք է զգում, հետևաբար, օրենսդրական համապատասխան ցենզերն այս առումով պետք է խստացվեն: Իհարկե, իր առաջնային դերը պահպանում է նաև մասնագիտական, բարոյական և գործանական հատկանիշներով զբաղեցրած պաշտոնին համապատասխան լինելու պահանջը:

Վերևում արդեն խոսվել է դատական իշխանության անկախության համար սոցիալ-տնտեսական անկյունաքարերի անհրաժեշտության մասին: Դեռևս Մխիթար Գոշն էր ընդգծում. «Պարտավորություն է, որպեսզի դատավորները գովեստ և պարզևներ ստանան թագավորներից, որպեսզի չլինի թե ձանձրանան դատ վարելուց, նույնը լինի եկեղեցու դատավորների համար, որ են եպիսկոպոսները. նրանք մեծամեծ պարզևներ ստանան կաթողիկոսից, և լիությամբ, որ չլինի թե աղքատության պատճառով Աստծո ուղիղ դատաստանը թյուրեն»: Գրականության մեջ հենց այս երաշխիքի գործուն ասպահովման բացակայությունն են համարվում այս համակարգում կոռուպցիայի առկայության ու աճի պատճառը: Ուզում ենք նկատել, որ այստեղ ևս կապը երկկողմանի է, և ցանկացած ոչ ճիշտ ու անարդարացի վճիռ ու դատավճիռ գալիս է ամրապնդելու բարոյահոգեբանական անդունդը անհատի ու պետության միջև և արգելափակելու ֆինանսատնտեսական հնարավոր աճն ու առաջընթացը:

Բացի սոցիալական ասպահովվածությունից՝ օրենսդրությունից պետք է հայցել դատավորներին ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից պաշտպանելու մեթոդներ և միջոցներ: Այս հարցի կապակցությամբ ևս Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան առաջարկում է լուծման իր տարբերակը: Մասնավորապես, դատավորը, որը կարծում է՝ իր կանոնադրային իրավունքները կամ ընդհանրապես իր անկախությունը կամ արդարադատության անկախությունը վտանգի տակ են կամ որևէ ձևով չեն ընդունվում, պետք է հնարավորություն ունենա դիմելու անկախ ինստանցիայի (մեր հանրապետության դեպքում՝ Արդարադատության խորհրդին), որն էլ իր հերթին պետք է արդյունավետ միջոցների տիրապետի իրադրության շտկման համար կամ դրա շտկման պահանջ ներկայացնի համապատասխան մարմիններին: Կարծում ենք, որ Արդարադատության խորհրդի սահմանադրական լիազորությունների մեջ այս կետը ևս պետք է ընդգրկվի:

Ներկայումս ձևավորվում է արդարադատության համաեվրոպական միասնական համակարգ, և ազգային համակարգը դրանից դուրս ու մեկուսի լինել չի կարող: Եվրախորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցությունից և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միանալուց սկսած՝ հաճախ է շահարկվում այն հարցը, թե Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանդիսանում է հայրենական դատական համակարգի համար վերադաս օղակ, թե ոչ: Քննարկենք այս հարցը ստորև:

### **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ դատական համակարգը**

Եվրոպական դատարանը կոնվենցիայի մասնակից պետության օրենսդիր և գործադիր մարմնի համար իրականում վերադաս ատյան չէ, իսկ դատական համակարգի համար չորրորդ ատյանի դատարան չէ: Հետևաբար, նա չի կարող չեղյալ հայտարարել ո՛չ պետական որևէ մարմնի ակտը, և ո՛չ էլ ազգային դատարանի ընդունած որոշումը: Եվրոպական դատարանը իրավասու չէ դատական որևէ մարմնի ցուցումներ տալ կամ

ներպետական օրենսդրության կամ դատական պրակտիկայի նկատմամբ ընդհանուր վերահսկողություն իրականացնել: Եվրոպական դատարանն իրավունք չունի իր կայացրած վճռի կատարումն ապահովող կարգադրություններ անելու: Դատարանը քննության է առնում կոնկրետ գանգատներ, որպեսզի որոշի, թե եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների խախտումներ տեղի ունեցել են, թե ոչ: Եվրոպական դատարանն իր վճռով ճանաչում է իրավունքի խախտումը, և իրավասու չէ փոփոխելու, բեկանելու կամ չեղյալ հայտարարելու ներպետական մարմնի ընդունած ակտերը, անգամ եթե դրանով ոտնահարվել է մարդու իրավունքները: Եվրոպական դատարանը բազմիցս իր վճիռների մեջ նշել է, որ ներպետական օրենքների մեկնաբանումը և կիրառումը վերապահված են ամենից առաջ ազգային իշխանություններին, մասնավորապես՝ ներպետական դատարաններին: Այլ հարց է, որ համաձայն նշված կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Եվրոպական դատարանի վճիռներն ուղարկվում են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ: Նախարարների կոմիտեն, Դատարանի վճիռը հանձնելով պատասխանող պետության արդարադատության նախարարին կամ դատական մարմիններին, որոնք առնչվում են քննվող գործին, առաջարկում է միջոցներ ձեռնարկել դրանց կատարումը ապահովելու համար և իրեն ծանուցել արդարացի փոխհատուցման, ինչպես նաև անհատական ու ընդհանուր միջոցառումների իրականացման մասին: Այնուհետև, ստանալով այդ տեղեկատվությունը՝ նախարարների կոմիտեն այն մանրամասն ուսումնասիրում է, և եթե գտնում է, որ պատասխանող պետությունը կատարել է դատարանի վճիռը, ընդունում է բանաձև՝ նշելով, որ տվյալ պետությունը կատարել է ստանձնած պարտավորությունը<sup>1</sup>:

Կարևոր է նաև այն համագամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխություններով ամրագրվել է միջազգային դատարան դիմելու և միջազգային դատարանի՝ իրավունքի խախտման հանգամանքը հիմնավորող վճիռը որպես նոր հանագամանք դիտարկելով՝ վճիռների կամ դատավճիռների վերանայման օբյեկտիվորեն ահրաժեշտ ընթացակարգ, ինչը մարդու իրավունքներ և ազատությունների միջազգային պաշտպանության, պաշտպանության այս տեսակի և ներպետական մեխանիզմների հաշտեցման ասպարեզում առաջադիմական քայլ է:

Այնուամենայնիվ, վերլուծենք նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու և նրա կողմից առաջադրված խնդիրների քննարկում և լուծում պահանջելու նպատակահարմարության հարցը ինչպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միացած պետությունների քաղաքացիների, այնպես էլ տվյալ պետությունների տեսանկյունից՝ հաշվի առնելով, ինչու չէ, նաև Եվրոպական դատարանի դերն ու ի սկզբանե նրա լուծմանը վերապահված խնդիրների շրջանակը: Խնդիրն այն է, որ հարցն ունի նաև մեկ այլ կարևոր ենթատեքստ. ներկայումս Ստրասբուրգի դատարանում կուտակվել է 25 հազարից ավելի գործ: Յուրաքանչյուր տարի դրանց թիվը ավելանում է ևս մի քանի հազարով: Դատարանն ի վիճակի է տարեկան քննելու շուրջ հազար գործ: Ո՞րն է ելքը. այն ազգային դատական համակարգի կենսունակության բարձրացման մեջ է, որի պարագայում ազգային Սահմանադրական դատարանում լիարժեքորեն կիրացվի մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը, սահմանադրական դատարանները անմիջականորեն կպաշտպանեն մարդու սահմանադրական իրավունքը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, ինչպես դա արվում է Գերմանիայում, Իսպանիայում և մի շարք այլ երկրներում, կհաստատվի խելամիտ ներդաշնակություն վերացական և կոնկրետ վերահսկողությունների միջև: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական առաքելությունը Կոնվենցիայի նորմերի մեկնաբանմանը, որն իր հերթին նախադեպային նշանակություն կունենա Եվրախորհրդի անդամ բոլոր երկրների իրավական համակարգերի համար<sup>2</sup>: Այս կապակցությամբ, պետք է նշել, որ սահմանադրական

<sup>1</sup> Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եր., 2002, էջ 90:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Եր., 2002, էջ 43:

փոփոխությունների ներկայիս տեքստով ընդլայնված է նաև Սահմանադրական դատարանի դիմելու սուբյեկտների ցանկը՝ հոդված 101-ի 6-րդ կետը սահմանելով հետևյալ կերպ.

**«Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի ուժի մեջ մտած վերջնական ակտ, սպառվել են ընդհանուր իրավասության դատարանում իրավունքի վերականգնման բոլոր հնարավորությունները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը»:** Այս դրույթի սահմանմամբ ներպետական մակարդակով խնդիրների լուծման հնարավորությունները նկատելիորեն աճում են:

Ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության դատական համակարգի վերաբերյալ մեր կողմից տրված դիտարկումները՝ կարծում ենք, որ օրենսդրության բացերի լրացումն այսօր ընդհանուր իրավական դաշտի կայունացման, փաստաբանական ինստիտուտի զարգացման, կենսամակարդակի բարձրացման, իրավական կուլտուրայի հենասյուների վրա վաղը կարող է վերջապես դատական անկախ ու անաչառ իշխանություն ունենալու նպատակը վերածել իրականության, սակայն առայժմ սա միայն նպատակ է:

### Օգտագործված գրականության ցանկ

#### *Տեսական աղբյուրներ*

1. Правовые системы стран мира, Энциклопедический справочник // Под ред. А. Я. Сухарова. М., 2001
2. Маклаков В. В. Иностранное конституционное право, М., 1996
3. Ս. Դիրանդյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2000
4. Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Եր., 2002
5. Գ. Հարությունյան, Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Եր., 2002

#### *Օրենսդրական ակտեր*

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 05.07.1995թ.)
2. «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք (ընդունված 18.06.1998թ.)
3. «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (ընդունված 17.06.1998թ.)
4. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2002թ.)
5. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 01.06.1998թ.)
6. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունված 17.06.1998թ.)
7. «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.10.1995թ.)
8. Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիա

## Ներածություն

«Եթե հոգին համարենք կենդանի էակի ավելի կարևոր մաս, քան մարմինը, ապա պետության հոգին էլ պիտի համարենք ավելի կարևոր, քան այն ամենը, ինչ վերաբերում է միայն նրա հանապազօրյա պահանջները բավարարելուն: Իսկ պետության հոգին են զինվորականները և նրանք, ում վրա է դրված արդարադատության իրականացումը դատաքննության ժամանակ»<sup>1</sup>:

Ահա ժամանակին այսպես է բնութագրել դատարանը՝ հույն մեծ փիլիսոփա Արիստոտելը: Վերոհիշյալի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ռ. Պապայանը տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Զինվորականների հիշատակումն ամենևին չի նսեմացնում այս արտահայտության նշանակությունը, քանի որ այստեղ պարզապես մատնանշված է երկու «փրկարար» կառույց, որոնցից մեկը կոչված է «փրկելու» պետությունը ներքին վտանգից (դատարան), մյուսը՝ արտաքին վտանգից (զորք)»<sup>2</sup>:

Իսկապես դատարանի կարևորությունը դիպուկ է բնութագրված. «Դատարանն առաջնայինն ու ինքնաբավ է հասարակության և պետության կյանքի կանոնավոր ընթացքի համար»<sup>3</sup>:

Դատարանի, դատական համակարգի արդյունավետ գործունեությունից է մեծապես կախված տվյալ պետության իրավական, ժողովրդավարական լինելու հանգամանքը: Դատարանն արդյունավետ կարող է գործել մի քանի նախապայմանների առկայության դեպքում, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 2 մեծ խմբերի՝ հարաբերական նյութական նախապայմաններ և հարաբերական ոչ նյութական նախապայմաններ:

Նյութականներից են՝ դատարանի անկախությունը, դատավորի սոցիալական պաշտպանվածությունը, դատավորի անփոփոխելիությունը և այլն: Ոչ նյութական նախապայմաններից են՝ դատավորի բարոյապես վեհ կերտվածքի հատկանիշները<sup>4</sup>:

Բարոյականության ամենից ճշմարիտ «ուղղեցույցում»՝ Աստվածաշնչում, դատավորի համար նախատեսվում են ի վերուստ սահմանված մի շարք ցենզեր: Ելից գրքի 18:21-ում ասված է. «Ողջ ժողովրդի միջից ընտրի՛ր ունակ (ուժեղ) տղամարդկանց՝ Աստուածապաշտ, արդարադատ, ազահություն (գոռոզություն) ատող մարդկանց»: Պարոն Ռ. Պապայանը վերոհիշյալի համար կարծում է, որ պետք է վերոհիշյալին տրվի սահմանադրական նորմի ուժ<sup>5</sup>, և մենք լիովին համաձայն ենք Ռ. Պապայանի հետ:

Դատարանը կոչված է արդարադատություն իրականացնել: Բնականորեն դժվար թե վերոհիշյալ բարոյական պահանջներին համապատասխանող անձը կատարի անարդար դատաքննություն, իսկ ավելի ճիշտ տվյալ անձը երբևիցե անարդար դատ չի անի:

Իսկ այժմ ձեռնամուխ լինենք թեմայի տարածական նկարագրությանը:

## Նկարագրական մաս

Մինչ ՀՀ դատական համակարգի ներկա վիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ մեր պատկերացումները ներկայացնելը, անհրաժեշտ ենք համարում դույզն ինչ բնութագրել դատական իշխանությունը սահմանափակ դրույթներով:

<sup>1</sup> Տե՛ս Արիստոտել. Սոց. 4ր., սրբ. 494, Մոսկվա 1976-1984:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Պապայան. «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները», Սուրբ Էջմիածին, 2002, էջ 454:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 435:

<sup>4</sup> Չեր ուշադրությունն ենք ցանկանում սևեռել դատավորի բարոյական կերպարի վեհության վրա՝ դրանով իսկ ցանկանալով արտահայտել մեր այն կարծիքը, որ նա պետք է ոչ թե պարզապես լինի բարոյական անձնավորություն, այլ բարոյապես վեհանձն անձնավորություն: «Վեհանձն» բառը բաղկացած է 2 արմատից՝ վեհ և անձ, այսինքն՝ ինքը լինես վեհ քո անձնական եսից՝ քո սեփական անձից լինես բարձր, լինես բարձր քո եսասիրական մղումներից, որով իսկ անձը կհասնի վեհության, իսկ վեհությանը բնութագրական է նաև սերն ի արդարություն:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 455:

Դատական իշխանությունը հասարակական կյանքի իրավակիրառ ոլորտում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման համար՝ պետության կողմից ստեղծված անկախ դատական մարմիններին օրենքով վերապահված լիազորություններն են, որոնք իրականացվում են դատավարական ձևին համապատասխան և նպատակադրված են անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանությանը<sup>1</sup>:

Մարդկությունը հասարակությունը իր տևական զարգացման ընթացքում՝ անընդհատ պրպտում էր, որպեսզի գտնի պետական կառավարման այնպիսի ձև, որը կվերացնի կամայականությունը: Ընդունված է համարել, որ այս խնդիրը լուծեց 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Շառլ Մոնտեսքյուն, որը ստեղծեց իշխանությունների տարանջատման տեսությունը<sup>2</sup>:

Դատական իշխանությունը՝ որպես պետական իշխանության ինքնուրույն տեսակ, առանձնանում է հետևյալ հատկանիշներով՝

- ա) դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն տեսակ է,
- բ) դատական իշխանությունը պատկանում է միայն դատարանին,
- գ) դատական իշխանության անկախությամբ, ինքնուրույնությամբ և առանձնացվածությամբ,
- դ) դատական իշխանությունը պետք է իրականացվի օրենքով սահմանված դատավարական ձևին համապատասխան:

ՀՀ դատական համակարգի կազմավորման ելակետային դրույթները ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ: «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Սահմանադրության միջև՝ ՀՀ դատական համակարգի վերաբերյալ դրույթներում, առկա են 2 հակասություններ՝

ա) «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, որը նվիրված է ՀՀ դատական համակարգին, չի հիշատակում ՀՀ Սահմանադրական դատարանին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում սահմանվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կարգավիճակը՝ խնդիրները, կազմավորման կարգն ու լիազորությունները, ապա այս պարագայում մենք հակված ենք եզրահանգելու, որ ՀՀ դատական համակարգի մեջ է ներառվում նաև ՀՀ Սահմանադրական դատարանը:

բ) Ըստ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի՝ տնտեսական և զինվորական դատարանները չեն մտնում ընդհանուր իրավասության դատարանների համակարգի մեջ, սակայն «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով այդ դատարանները ներառված են ընդհանուր իրավասության դատարանների համակարգի մեջ, ապա այս իրավիճակում մենք կարծում ենք, որ այդ դատարանները ևս մտնում են ընդհանուր իրավասության դատարանների համակարգի մեջ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ-ում գործող միջնորդ դատարաններին: Ըստ Ս. Դիրբանդյանի՝ այդ դատարանները չեն մտնում ՀՀ դատական համակարգի մեջ և դատական իշխանություն իրականացնելու լիազորությամբ օժտված չեն<sup>3</sup>: Մենք համակարծիք ենք նշված հեղինակի տեսակետի հետ:

Ինչպես հայտնի է, ներկայումս ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ կարևոր երկխոսություններ են տեղի ունենում Հայաստանի իշխանությունների, ընդդիմադիր քաղաքական գործիչների, Եվրախորհրդի և «Ժողովրդավարություն օրենքի միջոցով» հանձնաժողովի (Վեներտիկի հանձնաժողով) միջև: Հաստատակամորեն կարելի է ասել, որ Եվրախորհուրդը և Վեներտիկի հանձնաժողովը գտնում են, որ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ամենից մեծ անհրաժեշտությունը առկա է ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում («Դատական իշխանություն»):

2005 թ.-ի հունիսի 26-ին Ստրասբուրգից Երևան վերադարձան ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունը, որն իր հետ բերել է Վեներտիկի հանձնաժողովի անվերապահ հավանությանն արժանացած սահմանադրական բարեփոխումների

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահ մարմինները», ուսումնական ձեռնարկ իրավաբանական ԲՈՒՀ-երի համար, Ս. Դիրբանդյան, Եր., 2000, էջ 47:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Պապայան, «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները», Սուրբ Էջմիածին, 2002, էջ 424-487:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահ մարմինները», ուսումնական ձեռնարկ իրավաբանական ԲՈՒՀ - երի համար, Ս. Դիրբանդյան, Եր., 2000, էջ 48:

վերջնական տարբերակը: Փորձենք ներկայացնել այդ տարբերակի՝ դատական համակարգին վերաբերող կետերը<sup>1</sup>: Մասնավորապես, ըստ վերոհիշյալ տարբերակի՝ Արդարադատության խորհրդի ներկայացմամբ ՀՀ Նախագահը նշանակելու է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, ինչպես՝ դատավորներին: Այս փոփոխությունն ըստ իր. գիտ. դոկտոր Ա. Հարությունյանի՝ կապահովի Արդարադատության խորհրդի անկախությունը գործադիր իշխանությունից և ՀՀ Նախագահից: Ըստ այդ տարբերակի՝ Արդարադատության խորհրդի նիստերը վարելու է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը՝ խորհրդատվական ձայնի իրավունքով և առանց քվեարկելու իրավունքի<sup>2</sup>:

ՀՀ դատական համակարգում առանցքային բարեփոխումների կարիքը զգացվում է հիմնականում 2 ոլորտներում՝ ՀՀ Արդարադատության խորհուրդ և ՀՀ Սահմանադրական դատարան:

«Արդարադատության խորհուրդ» հասկացությունը պետք է սկզբունքային կապի մեջ դրվի դատարանի և դատավորների անկախության հետ և դիտարկվի այդ տեսանկյունից: Դատավորների անկախությունը ամենաբարձր սահմանադրական բարիքներից մեկն է, իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը: Ինչպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ իշխանությունների բաժանման արդյունավետությունն ի վերջո կախված են աշխատունակ երրորդ իշխանության գոյությունից: Եթե ժողովրդին և նրա կողմից ստեղծված պետական իշխանությանը չի հաջողվում ապահովել դատավորների և դատական իշխանության անձնական և առարկայական անկախությունը, ապա Սահմանադրության կողմից իրավական պետություն հռչակելը ոչ միայն մնում է դատարկ ու անբովանդակ մի հռչակագիր, այլ նաև ժողովրդավարական հաստատությունների համար բացակայում են այն ընդհանուր պայմանները, որոնք ապահովում ու երաշխավորում են սահմանադրական կանոնների պահպանումը:

Դատավորների և դատարանների անկախությունը՝ որպես իրավական ինստիտուտ, հատկապես ուժեղ վտանգի տակ է դրվում՝

ա) դատավորների նշանակման ընթացակարգում,

բ) դատարանի կառավարչության պաշտոնական գործունեության ժամանակ, ներառյալ դատարանի կազմակերպումը և անձնակազմի կառավարումը,

գ) կարգապահական վարույթների անցկացման ժամանակ՝ կարգապահական տույժեր նշանակելու նպատակով, ընդհուպ մինչև վաղաժամկետ պաշտոնանկությունը:

Բնականաբար, դատավարական անկախության մեջ ամենաուժեղ միջամտությունը դատավորի պաշտոնանկությունն է: Սրանից հետևում է, որ առավել ուշադրությամբ պետք է կարգավորել այն վարույթը, որով դատավորը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության, որպեսզի լիովին բացառվեն չարաշահումները և կամայականությունը:

Դատավարական անկախությանը զգալի վտանգներ կարող են ապառնալ նաև պաշտոնավարման ժամանակ: Սովորաբար այստեղ առաջին հերթին ի նկատի է ունեցվում անկախության այնպիսի խոչոր խախտման մասին, ինչպիսին են (սովորական) դատավորին տրվող հնարավոր ցուցումները դատարանից դուրս կամ նաև հենց դատարանում դատարանի նախագահի կամ պալատի նախագահի կողմից այն մասին, թե ինչպես պետք է լուծվեն տվյալ գործերը: Սակայն ոչ պակաս վտանգավոր են այն միջամտությունները, որոնք անուղղակիորեն են ուղղված դատավորների անկախության դեմ, երբ, օրինակ, որևէ պալատից կամ դատավորից վերցվում է գործը և փոխանցվում մեկ այլ պալատի կամ դատավորի, կամ դատավորը տեղափոխվում է մեկ այլ դատարան կամ նույն դատարանում մեկ այլ պալատ: Այս բոլոր դեպքերում թեև դատավորը սկզբունքորեն պահպանում է իր պաշտոնը, սակայն նա կորցնում է գործերի՝ իր կողմից կատարվելիք քննումը և լուծումը ի

<sup>1</sup> Մենք հնարավորություն ունենք այս մասին խոսել՝ որպես միակ աղբյուր ունենալով «Հայկական Ժամանակ» օրաթերթի 2005 թ.-ի հունիսի 28-ի հրատարակման 3-րդ էջի հոդվածը (հոդվածի վերնագիրն է՝ «Հեղափոխություն առանց վարդերի»), և այդ իսկ պատճառով ստիպված ենք ներկայացնել շատ սուս կարգով այդ փոփոխությունները:

<sup>2</sup> Տե՛ս «Հայկական Ժամանակ» օրաթերթ, 2005 թ.-ի հունիսի 28, էջ 3:

օգուտ այն պալատներին կամ առանձին դատավորներին, որոնցից սպասելի է, որ նրանք գործը կլուծեն որոշակի և սպասվելիք կերպով:

Դատարանի կառավարչության կողմից նման մանիպուլյացիաների վտանգը կարելի է տարբեր եղանակներով հասցնել նվազագույնի: Միջոցներից մեկը կարող է լինել այն, որ դատավորի փոխադրումը մեկ այլ դատարան կամ նույն դատարանի մեկ այլ պաշտոն կախվածության մեջ դրվի համապատասխան դատավորի համաձայնությունից: Մեկ այլ հնարավոր միջոց է մեկ կամ մի քանի դատարաններում կազմակերպչական փոփոխությունների հարցի լուծումը, որը նշանակալի հետևանքներ ունի այնտեղ աշխատող դատավորների պաշտոնավարման համար, վերապահել մի արտաքին, սակայն դատավորներից բացկացած կոլեգիալ մարմնի, կամ էլ լուծումը կախվածության մեջ դնել նման (արտաքին) կոլեգիալ մարմնի համաձայնությունից: Դատավորների արդյունավետ անկախության համար մեծ նշանակություն ունի նաև դատավորներին պաշտոնի նշանակելու ընթացակարգը, լինի դա ընտրության, նշանակման կամ թե այլ ձևով: Որպես հիմնական կանոն, դատավորների անկախությունն ամենից շատ ապահովված է այն դեպքում, երբ պաշտոնի նշանակելու ընթացակարգը օբյեկտիվորեն նպաստում է բարձր մասնագիտական ունակություններ և բարոյական հատկանիշներ ունեցող իրավաբանների ընտրությանը, այլ խոսքով՝ երբ որոշում կայացնելու ընթացքում սուբյեկտիվ, անձնական կամայականությունը մի կողմ է դրվում:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը նախատեսում է մի մարմին, որն առաջին հերթին պետք է ապահովի դատավորների անկախության պաշտպանությունը՝ Արդարադատության խորհուրդը<sup>1</sup>: Դատավորների անկախությունը պաշտպանելու տեսակետից Արդարադատության խորհրդի կառուցվածքը սակայն հետևողական չէ, ունի ներքին հակասություններ և զուրկ է հստակությունից:

Առաջին, Արդարադատության խորհուրդն ի պաշտոնե ղեկավարվում և ներկայացվում է «նախագահության» կողմից, որի մեջ չի մտնում որևէ դատավոր, առավել ևս որևէ դատարանի նախագահ, այլ միայն պետական գործադիր իշխանության երեք մարմինները, այսինքն՝ ՀՀ Նախագահը, արդարադատության նախարարը, գլխավոր դատախազը: Որևէ բան չի փոխում այն հանգամանքը, որ նրանք նշանակալի ֆունկցիաներ են իրականացնում արդարադատության բնագավառում: Այստեղ վճռական է միայն այն, որ այս երեք պաշտոնատար անձանցից ոչ մեկը չի պատկանում դատական իշխանությանը, այսինքն՝ դատարաններին, և որ այդ պատճառով (նաև) նրանց նկատմամբ անպայման պետք է ապահովվի դատավորների անկախությունը: Որևէ կերպ չի կարելի հիմնավորել, թե ինչու է գլխավոր դատախազը Արդարադատության խորհրդի նախագահի տեղակալը, այլ ոչ թե վճռաբեկ դատարանի նախագահը կամ դատարանների նախագահների խորհրդի նախագահը: Ըստ մեզ՝ սա լուրջ բացթողում է:

Երկրորդ, Արդարադատության խորհրդի լիազորությունների համակարգում միախառնված են շատ տարբեր, ֆունկցիոնալ տեսակետից անհամատեղելի խնդիրներ, այսպես՝

- ա) դատավորների անկախության ապահովման խնդիրներ<sup>2</sup>,
- բ) մասնակցությունը դատախազության պաշտոնների նշանակմանը<sup>3</sup>,
- գ) հանրապետության Նախագահի կողմից ներման իրավունքի իրականացմանը մասնակցելը<sup>4</sup>:

Թեև լիազորությունների մեծամասնությունը կապված է դատավորների անկախության խնդրի, հատկապես՝ նշանակումների, առաջխաղացման, կարգապահական միջոցառումների հետ, և դատավորների թիվը Արդարադատության խորհրդում, ըստ գործող իրավունքի, աննշան գերազանցում է մեծամասնությունը ( 17 տեղից 9-ը ), սակայն այն պատճառով, որ որևէ դատավոր ներկայացված չէ Արդարադատության խորհրդի նախագահությունում և որ Արդարադատության խորհրդում որակական և ինստիտուցիոնալ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գործող Սահմանադրության հոդվածներ 94, 95:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ գործող Սահմանադրության 95-րդ հոդված, կետեր 1, 3, 5, 6, 7:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, կետեր 2, 4, 5:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 8:

գերակշռությունը գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմն է, Արդարադատության խորհրդի կերպարում չի նշմարվում դատավորների անկախության ապահովման ֆունկցիան: Նրա կերպարի աղավաղմանը էականորեն նպաստում է այն, որ Արդարադատության խորհրդի միջոցով դատավորները ինտենսիվորեն մասնակցում են դատախազության կադրային հարցերին, և ընդհակառակը՝ դատախազները ինտենսիվ կերպով մասնակցում են դատավորների նշանակման հարցերին:

Սկզբունքորեն դրական պետք է գնահատել այն կարգավորումը, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհուրդի 14 անդամները գործը քննում և լուծում են առանձին, վճռաբեկ դատարանի նախագահի նախագահությամբ<sup>1</sup>: Դրանով ապահովվում է, որ դատավորները պահպանեն հնարավորությունն իրենց շարքերից ազատելու «գառան դիմակով գայլերին»: Սակայն պետք է նկատենք, որ այս մարմինն իսկական կարգապահական դատարան չէ, այլ իմիտացիա է, նաև այն պատճառով, որ այդ մարմնի մեջ են մտնում նաև դատախազներ և իրավաբան գիտնականներ, որոնք դատարաններում չեն աշխատում:

ՀՀ դատավորների անկախության ապահովման սահմանադրական խնդիրն ամենից պարզ և հստակ ձևով կլուծեր, եթե Արդարադատության խորհրդից դուրս 95-րդ հոդվածի 7-րդ կետում նախատեսված մարմնի փոխարեն ստեղծվեր դատավորի կարգավիճակից բխող իրավունքների և գործունեության վերաբերյալ վեճերի համար իրավասու դատարան: Նման դատարան՝ որպես առանձին պալատ, կարող է ստեղծվել վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք պետք է ունենան ինչպես արդարադատության նախարարը, այնպես էլ դատարանների նախագահների խորհուրդը, բացի այդ՝ նաև յուրաքանչյուր դատավոր իր դեմ, երբ վերջինս ցանկանում է իրեն ազատել իր դեմ եղած կասկածներից փաստացի հանգամանքների վերջնական պարզաբանման միջոցով:

Գործող Արդարադատության խորհրդի կառուցվածքի վերաբերյալ այս քննադատական դիտողությունների ֆոնի վրա առաջարկվում է .

ա) Արդարադատության խորհրդին էլ առավել հստակ տեսք տալ՝ որպես պետության երկու անկախ իրավական ինստիտուտների (դատարանների և դատախազության) համատեղ մի մարմին, որի խնդիրը կայանում է պետության նախագահին արդարադատության բնագավառում իր ֆունկցիաներն իրականացնելիս աջակցելուն, ինչպես դրանք սահմանված են ՀՀ գործող Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետում,

բ) ստեղծել դատավորի կարգավիճակից բխող և գործունեության վերաբերյալ վեճերի համար դատարան՝ ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 7-րդ կետում նախատեսված մարմնի փոխարեն:

Առաջինի վերաբերյալ նախագահությունը պետք է զգալիորեն ընդլայնվի: Քանի որ Արդարադատության խորհրդի հիմնական խնդիրն է մշակել և նախապատրաստել առաջարկներ Նախագահի համար, տրամաբանական չէ, որ Նախագահը նախագահի Արդարադատության խորհրդում և ընդհանրապես լինի Արդարադատության խորհրդի անդամ: Բացի այդ, տրամաբանական չէ և հակասում է Արդարադատության խորհրդի ֆունկցիային, որ դրա անդամ է գլխավոր դատախազը, սակայն ոչ դատարանների խորհրդի նախագահը կամ վճռաբեկ դատարանի նախագահը (ի պաշտոնե):

Հաշվի առնելով այն փաստը, որ արդարադատության նախարարը արդարադատության անկախ մարմին չէ, այլ գործադիր իշխանության՝ կառավարության ենթակառուցվածք, ապա նրա մասնակցությունը Արդարադատության խորհրդի աշխատանքներին պետք է սահմանափակվի առաջարկություններ անելու իրավունքով, ինչպես դա նախատեսված է ՀՀ գործող Սահմանադրության 95-րդ հոդվածի առաջին կետում: Նախագահության մեջ արդարադատության նախարարի գտնվելը մեծ լարվածության մեջ է Արդարադատության խորհրդի ֆունկցիաների հետ, և դա սրողում է այդ մարմնի՝ վերևում նշված իմաստը: Ուստի, Արդարադատության խորհրդի համանախագահներ պետք է լինեն վճռաբեկ դատարանի նախագահը և գլխավոր

<sup>1</sup> Տե՛ս նույն հոդվածի 7-րդ կետը:



դատախազը, որոնք կարող են յուրաքանչյուր տարի փոխարինել իրար նախագահությունում: Մեր կողմից այս առաջարկությունն արվում է, իհարկե, այն նախապայմանով, որ նաև ապագայում Արդարադատության խորհուրդը մի շարք իրավասություններ է ունենալու նաև դատախազության համակարգում:

Երկրորդ. Արդարադատության խորհրդի կազմը կարելի է և պետք է իր յուրահատկությանը համապատասխան այնպես փոխել, որ ներկայացված լինեն նաև փաստաբանները, քանի որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքի համաձայն՝ պաշտպանները դատախազության հետ իրավահավասար մասնակցում են դատական վեճին: Ի դեպ, փաստաբանը քաղաքացիական, տնտեսական գործերում շատ ժամանակ ավելի մեծ դեր է ունենում քան դատախազությունը: Հետևաբար, փաստաբանները արդարադատությանը և դատական իշխանությանը ինստիտուցիոնալ տեսակետից ավելի մոտ են կանգնած, քան իրավաբան գիտնականները, որոնք այսօր Արդարադատության խորհրդում ներկայացված են երկու անդամով:

Երրորդ. Արդարադատության խորհրդի լիազորությունները պետք է կրճատել այն լիազորություններով, որոնք պետք է կատարվի վերևում նախատեսված դատավորների գործերով հատուկ դատարանը: ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 6-րդ կետի ֆունկցիան, այսինքն՝ դատավորին անձեռնմխելիությունից զրկելուն մասնակցությունը և այլն, կարող է և պետք է մնա Արդարադատության խորհրդին: Ի հակառակ դրան՝ 7-րդ կետում նշված ֆունկցիան և հատկապես դատավորների վաղաժամկետ պաշտոնանկության մասին որոշումները, լինի դա ծանր իրավախախտման (դատավորի գործունեությունից դուրս քրեական հանցագործություն կատարելիս, դիտավորյալ կերպով իրավունքը սխալ կիրառելը և այլն) կամ ֆիզիկական անհնարիմության (հիվանդություն և այլն) հիմքերով, պետք է պատկանի բացառապես առաջարկվող դատավորների գործերով դատարանին: Կարգավորումը պետք է համաձայնեցվի վերևում առաջարկված 94-րդ հոդվածի 4-րդ կետի հետ:

Մեկ հանգամանք ևս, որ կցանկանայինք առավել հստակեցնել, այն է, որ ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի առաջին նախադասությունը «դատական մարմինների անկախության երաշխավորը հանրապետության Նախագահն է», պետք է փոփոխել և ձևակերպել հետևյալ կերպ՝ «դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով»:

### **Սահմանադրական դատարանի բարեփոխումների մասին**

Սահմանադրական դատարանի մասին դրույթները պետք է գործող Սահմանադրության ավելի մեծ արդյունավետության շահերից ելնելով Հայաստանի Հանրապետության ամբողջ իրավակարգի շրջանակներում զգուշորեն ընդլայնվեն: Նախկին փորձը ցույց տվեց, որ ՀՀ Սահմանադրական դատարանը միջազգային փորձի համեմատ միայն շատ փոքր ծավալով է զբաղված վիճահարույց հարցեր լուծելով: Դրա պատճառը բնավ էլ արդարադատություն իրականացնելու իրավասությունների փոքր ծավալը չէ, ընդհակառակը՝ Սահմանադրական դատարանի լիազորությունների համակարգը, ըստ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի, բավական ծավալուն է: Ավելի շուտ պատճառն այն է, որ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը շատ նեղ է:

Բացի այդ, դատարան դիմելու իրավունք տալու վերաբերյալ մոտեցումը գործին նպաստող ձևով չի համաձայնեցված Սահմանադրական դատարանի լիազորությունների համակարգի հետ: Ինչպես այլ երկրներում, Սահմանադրական դատարանի կարևորագույն լիազորությունը իրավական նորմերի վերահսկողությունն է, այսինքն՝ պառլամենտի և պետության նախագահի իրավական ակտերի, ինչպես կառավարության որոշումների սահմանադրականության ստուգումը և պարզումը: Այդ ակտերում ամրագրված դրույթները վերաբերում են համարյա բացառապես քաղաքացիներին, քաղաքացիների կողմից ստեղծված մասնավոր միավորումներին, տնտեսական ձեռնարկություններին, հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին և այլն: Սակայն ակնառու կերպով վերոհիշյալ սուբյեկտներից որևէ մեկը

հնարավորություն չունի նորմերի վերահսկողության նպատակով դիմելու Սահմանադրական դատարան՝ ոչ ուղղակիորեն և ոչ էլ անուղղակիորեն: Նորմերի վերահսկողության նպատակով դիմողների թիվը սահմանափակված է ՀՀ Նախագահով և ԱԺ-ի անդամների մեկ/երրորդով: 131 պատգամավորներից մեկ/երրորդին դիմելու իրավունք տալը, այսինքն՝ առնվազն 44 պատգամավորներին, չափից մեծ արգելապատնեշ է Սահմանադրական դատարան դիմելու համար: Թեև այն պառլամենտական փոքրամասնությանը պաշտպանում է պառլամենտական մեծամասնությունից, երբ վերջինս չարաշահում է իր իշխանությունը՝ հակասահմանադրական օրենքներ ընդունելով, սակայն 44 պատգամավորների թվաքանակը չափազանց մեծ է, որպեսզի նաև արտապառլամենտական ուժերին հնարավորություն ընձեռնվի անուղղակի կերպով, այսինքն՝ մոբիլիզացնելով ԱԺ-ի շահագրգիռ խմբակցությունները, նախաձեռնելու նորմերի վերահսկողական վարույթը:

Դիմելու իրավունքի սահմանափակման շատ կասկածելի հետևանքը կայանում է նրանում, որ հատկապես գործադիր իշխանության նորաստեղծությունը, այսինքն՝ հանրապետության Նախագահի և կառավարության ակտերը, դե ֆակտո բացառվում են Սահմանադրական դատարանի վերահսկողությունից: Նախորդ փորձը ցույց տվեց, որ պառլամենտական մեծամասնությունը նման վերահսկողության հետաքրքրություն չունի: Եթե այլ կերպ լիներ, ապա բավական քանակությամբ դիմումներ կտրվեին Սահմանադրական դատարանին: Սակայն դա այդպես չէ:

Ուստի, Սահմանադրական դատարանի մասին դրույթներն ունեն իրավաբանական կառուցվածքի սխալ, որն ինչպես ասվեց, դիմում տալու իրավունք ունեցողների շատ մեծ սահմանափակումն է: Այս հարցի լուծման համար կան մի քանի մոտեցումներ.

- ա) անհատական գանգատի ներմուծումը, այսինքն՝ անձին, լինի դա քաղաքացի, օտարերկրացի, թե քաղաքացիություն չունեցող անձ, իրավունք տալը իրեն կոնկրետ վերաբերող վեճով դիմելու Սահմանադրական դատարան,
- բ) նորմերի կոնկրետ վերահսկողության ներմուծումը դատարանին դիմում տալու իրավունք ընձեռնելով, որով Սահմանադրական դատարանի կողմից կստուգվի այն իրավական ակտի սահմանադրականությունը, որից կախված է դատարանում քննվող գործի լուծումը,
- գ) Մարդու իրավունքների պաշտպանին իրավունք ընձեռնելը, նորմերի վերահսկողության դիմում ներկայացնելու Սահմանադրական դատարան:

Այս խնդիրները քննարկելիս պետք է հաշվի առնել այն փաստը, որ Եվրոպայի Խորհրդում Հայաստանի Հանրապետության անդամակցության և

4.11.1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային միանալու հետևանքով սկզբունքորեն յուրաքանչյուր քաղաքացի ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարան անհատական գանգատ ներկայացնելու իրավունք, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությանը կարող է դատի տալ Ստրասբուրգում: Անհատական գանգատ ներմուծելով՝ Հայաստանի Հանրապետությունը կհետևի առնվազն եվրոպական իրավունքում շատ տարածված միտումին:

Սակայն լիովին անհիմն չեն այն մտավախությունները, որ Հայաստանի Սահմանադրական դատարանը անհատական գանգատ ներմուծելուց հետո արագ կհեղեղվի դիմումներով և դրա հետ կապված բնակչության հնարավոր մեծ սպասումները շատ շուտ ի հայտ կգան: Այս փաստարկը շատ լուրջ պետք է ընդունել: Թերևս ավելի լավ կլիներ խնդրի լուծմանը մոտենալ զգուշորեն, որպեսզի Սահմանադրական դատարանը հնարավորություն ստանա քայլ առ քայլ նախապատրաստվելու նորմերի վերահսկողության աճի դիմումների թվին: Դրա համար կարող են պիտանի լինել, ինչպես նորմերի կոնկրետ վերահսկողությունը դատարանների կողմից, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանի դիմում տալու իրավունքը: Այս երկու ճանապարհները իրար նկատմամբ այլընտրանքային չեն, այլ պետք է երկուսն էլ բացվեն իրար հետ: Դատարանների և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի իրավունքը կլինեն մի կողմից ընթացակարգային գտիչ քաղաքացու և Սահմանադրական դատարանի հարաբերություններում, սակայն այդ իրավունքները, չնայած գտիչի ֆունկցիային, շատ ավելի մեծ չափով կհամապատասխանեն քաղաքացիների և քաղաքացիական հասարակության սուբյեկտների օրինական շահերին, քան Սահմանադրական դատարան դիմելու գործող կարգավորումը:

Նպատակահարմար ենք գտնում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնակառավարման իրենց սահմանադրական իրավունքի պաշտպանության համար՝ նույնպես հնարավոր լինի դիմել Սահմանադրական դատարան:

Այն պնդումներն, որ իբրև թե ՀՀ դատական համակարգի զարգացմանը խոչընդոտում է երդվյալ ատենակալների բացակայությունը, ըստ մեզ՝ այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Այսպիսի մի խոսք կա հայերիս մոտ. «Հայաստանն այնքան փոքր է, որ եթե իրար հետ դույզն ինչ գրուցենք, կբացահայտվի մեր ազգակցական կապը»: Հայ հասարակության այսօրվա իրավագիտակցության պայմաններում՝ ներդնել երդվյալ ատենակալների համակարգը համարում ենք անիմաստ, քանզի մեծամասամբ գործերը լինելու են օբյեկտիվությունից զուրկ: Այդ համակարգը կարելի է ներդնել միայն այն ժամանակ, երբ հասարակության իրավագիտակցությունը, գիտակցությունը և հասարակության անդամների ինքնագիտակցությունը լինեն «բարձր»:

Անհրաժեշտ ենք համարում նաև, որպեսզի ստեղծվի «Անչափահասների գործերով դատարան»<sup>1</sup>, առանձին ամուսնալուծման գործերի քննության համար «Ամուսնալուծման դատարան»<sup>2</sup>, և «Եկեղեցական դատարան»<sup>3</sup>:

<sup>1</sup> Նման դատարան օրինակ գործում է Հունաստանում:

<sup>2</sup> Նման դատարան օրինակ գործում է Ճապոնիայում: Պատահական չենք համարում, որ հենց Ճապոնիայում է գործում նման դատարան, չնայած այլ պետություններում էլ կան: Յուրաքանչյուր ազգի միաբանությունը կազմված է աշխարհիկ-գաղափարական և հոգևոր գործոններից: Ազգային կրոն ունենալը և դա պատշաճ կերպով ընկրմված չլինի ընտանիքների մեջ, որոնց համակցությունից է ձևավորվում, նշանակում է պետության հզորացման կարևոր «գործիքն» անտեսել: Ամուսնալուծման դատարանի մեր առաջարկած մոդելը կայանում է հետևյալում՝ այն բացկացած կլինի 2 պալատներից, որոնք են քրեական գործերի քննության համար (օրինակ՝ ամուսինը վիճաբանության ժամանակ սպանել է կնոջը, կամ որդին գողացել է տանից գույք և այլն) «Քրեաիրավական պալատ», որտեղ դատավորներ կլինեն իրավաբանները, իսկ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցիի ներկայացուցիչ հոգևորականը օժտված կլինի խորհրդակցական ձայնի իրավունքով, որը պետք է պարտադիր հաշվի առնի դատարանը: 2-րդ պալատը «Քաղաքացիաիրավական գործերով», այստեղ դատարանը կլինի կոլլեգիալ ձևով, սակայն նախագահողը կլինի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցիի ներկայացուցիչ – հոգևորականը, իսկ մյուս 2 դատավորները կլինեն իրավաբաններ, և վճիռը կայացվելու է կոլլեգիալ ձևով: Միգուցե մեր առաջարկածը շատ կողմերով հակասում է արդի իրավունքի նորմերին և պահանջներին, սակայն քաջ գիտակցելով, որ Հայաստանին, հայ ազգին սպառնում է վտանգ, որի անունն է գլոբալիզացում և իմանալով, որ ըստ սոցիոլոգների հաշվարկի 50 տարի անց հայ ազգը վերանալու է, ապա այս պարագաներում պետք է կառչել մեր արմատներից, որպեսզի կառչած մնանք մեր գոյությունից: Ընտանիքը ամենից կարևոր օբյեկտն է հասարակության ձևավորման:

<sup>3</sup> Հունաստանի և Իսրայելի օրինակներով, այսինքն՝ այդ դատարաններում քննվում են Եկեղեցու մեջի գործերը, նաև հոգևորականների կողմից կատարված հանցագործությունները քննում է կրկին այդ դատարանը:

## Եզրափակիչ մաս

Մենք փորձեր արեցինք ներկայացնել մեր պատկերացումները ՀՀ դատական համակարգի ներկա վիճակի և զարգացման հեռանկարների մասին՝ դրանով իսկ կատարելով մեր քաղաքացիական պարտքն այս բնագավառում:

Հասարակության մեջ պետք է արմատախիլ անել անվստահությունը դատական համակարգի, դատարանների հանդեպ: Դա իրենից ներկայացնում է երկար, բարդ, ծավալուն և մեծ ջանքեր պահանջող գործընթաց: Այդ անվստահությունն առաջացավ խորհրդային տարիներին և ցավոք սրտի դեռ պահպանվում և շարունակվում է մինչ այսօր: Տրամադրող են այն հանգամանքները, որ Հայաստանը դառնալով Եվրախորհրդի անդամ, ստանձնել է մի շարք պարտականություններ, որոնք պարտավոր է կատարել նաև այս բնագավառում, ուստիև համուզված ենք, որ մոտակա 5-10 տարիների ընթացքում մենք կունենանք առավել կատարելագործված դատական համակարգ:

Պատմությունը ցույց է տալիս, որ հզոր երկրներ են դարձել այն երկրները, որտեղ կատարվել է օրենքը, որտեղ օրենքը պաշտպանել է իրավունքը: Օրենքի միջոցով իրավունքի պաշտպանությունը դա կարևոր երաշխիք է, որպեսզի անձանց մոտ առաջանա վստահություն պետության, դատարանի նկատմամբ: Իսկ դատարանը հենց այն մարմինն է, որը ստեղծում է հավասարակշռություն ոչ միայն իշխանության մյուս 2 թևերի միջև, այլ հասարակության և դրանց միջև: Ըստ մեզ՝ դատարանը երկրում կայունության ապահովման ամենից կարևոր մարմինն է: Միայն անկախ, ինքնուրույն, արդարասեր դատական համակարգի առկայության դեպքում է հնարավոր պետության իրավական և ժողովրդավարական լինելը<sup>1</sup>:

Ինչևիցե բոլորս հավատանք, որ կունենանք հզոր Հայաստան իր հզոր դատարանով, որպեսզի տեսնենք այդպիսի Հայաստան:  
Ընտրությունը մերն է:

## Օգտագործված գրականության ցանկ

### *Նորմատիվ իրավական ակտեր*

1. ՀՀ Սահմանադրություն, 05.07. 1995 թ.
2. ՀՀ օրենքը «Դատարանակազմության մասին», 18.06.1998 թ.
3. ՀՀ օրենքը «Դատավորի կարգավիճակի մասին», 17.06.1998 թ.
4. ՀՀ օրենքը «Արդարադատության խորհուրդի մասին», 23.10.1995 թ.
5. ՀՀ օրենքը «Սահմանադրական Դատարանի մասին», 09.12.1997թ.

### *Տեսական աղբյուրներ*

1. «ՀՀ դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները», Ս. Դիլբանդյան, Եր., 2000
2. «Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները», Գ. Հարությունյան, Եր., 2003
3. «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները», Ռ. Պապայան, Սուրբ Էջմիածին, 2002
4. ՀՀ Սահմանադրական իրավունք, պատ. խմբագիր Ն. Ա. Այվազյան, Եր., 2000
5. «Սահմանադրական վերահսկողություն» Գ. Հարությունյան, Եր., 2002
6. «Իրավունքի և պետության տեսություն» Վ. Ա. Ներսիսյանց, Եր., 2001
7. Правовые системы стран мира, А . Я . Сухарев, Москва, 2000

<sup>1</sup> Մենք այս գաղափարը չենք բացարձակեցնում:

Ներածություն

ՀՀ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Փաստորեն, ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն ԽՍՀՄ Սահմանադրության, ամրագրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը համարվում է պետական մարմինների փոխհարաբերության ու փոխհամագործակցության ոլորտում գոյություն ունեցող հայեցակարգերից ամենակենսականը: Իշխանությունների տարանջատման պայմաններում դատական համակարգի դերը հատկապես կարևորվում է «զսպումների» և «հակակշիռների» մեխանիզմի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար: Անկախ և անկողմնակալ դատական համակարգը իրավական պետություն ստեղծելու առաջնային և հիմնական նախադրյալներից է:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար իրավունքների խախտման դեպքում ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը մանրամասնել է հռչակագրի վերոնշյալ դրույթը և ամրագրել, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:

Սահմանադրության ընդունումից հետո ՀՀ-ում սկիզբ առան դատաիրավական բարեփոխումները, որոնց վերջնական նպատակը մի այնպիսի դատական համակարգի ստեղծումն էր, որը հռչակագրի ու Սահմանադրության վերոնշյալ դրույթներին համապատասխան արդյունավետորեն կպաշտպաներ անձի իրավունքներն ու օրինական շահերը, իր պարտականությունների կատարման ընթացքում գերծ կմնար պետական իշխանության մյուս մարմինների անհարկի միջամտություններից և կվայելեր հասարակության վստահությունը:

Այսպիսի նպատակների հասնելու համար անհրաժեշտ էր որոշակի տևական ժամանակ, որի ընթացքում մանրազնին կուսումնասիրվեին կուտակված փորձը, երկրի ընդհանուր կացությունը, քաղաքական ու տնտեսական վիճակը, հասարակության և պաշտոնյաների բարոյահոգեբանական վիճակն ու որակները, դատավորների իրավագիտակցության աստիճանը և այլ հանգամանքներ: Իսկ ահա մեզ մոտ կարճ ժամանակում ուսումնասիրվեց ընդամենը մի քանի զարգացած եվրոպական երկրների դատավարական օրենսդրությունը և այն որոշակի ձևափոխություններով ու խեղաթյուրումներով կյանքի կոչվեց ՀՀ-ում: Կիրառման հենց առաջին տարում պարզվեց, որ մեր դատավարական օրենսդրությունը (հատկապես քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը) լի են բացերով ու թերություններով, և մինչև այժմ կատարված բազմաթիվ փոփոխություններով ու լրացումներով այդ բացերն ու թերությունները դեռ չեն վերացվել:

Ուստի սույն աշխատությունում կանդորադառնանք ներկայիս դատական համակարգի թե՛ առավելություններին, թե՛ թերություններին, և հետագայում ավելի կատարելագործված դատական համակարգ կառուցելու համար անհրաժեշտ մեր կողմից առաջարկվող քայլերին:

Հենց կատարյալ դատական համակարգի առկայության պայմաններում երկրում մեծ ուժով կզարգանան տնտեսությունը, մշակույթը, գիտությունը, կրթությունը, կրթարձանա հասարակության իրավագիտակցության աստիճանը:

## Նկարագրական մաս

ՀՀ Սահմանադրության հոդված 91-ի համաձայն՝ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ հոդված 92-ի համաձայն՝ ՀՀ-ում ընդհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: ՀՀ-ում գործում են նաև տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է եռաստիճան դատական համակարգը, որը շատ նման է ֆրանսիական դատական համակարգին:

Մինչև ՀՀ դատական համակարգի կազմավորմանն ու գործունեությանը անդրադառնալը, պետք է պարզել, թե արդյոք Սահմանադրական դատարանը մտնո՞ւմ է ՀՀ դատական համակարգի մեջ: Իրավաբանական գրականության մեջ այս հարցին միանշանակ լուծում տրված չէ: Հեղինակների մի մասը գտնում է, որ Սահմանադրական դատարանը մտնում է դատական համակարգի մեջ, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում, որը նվիրված է դատական իշխանությանը, սահմանվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կարգավիճակը՝ նրա խնդիրները, կազմավորման կարգը և լիազորությունները<sup>1</sup>: Տեսաբանների մյուս խումբը գտնում է, որ Սահմանադրական դատարանը հանդիսանում է դատական իշխանության մարմին<sup>2</sup>, իսկ երրորդների կարծիքով այն ընդհանրապես չի մտնում դատական համակարգի մեջ: Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրական դատարանը չի մտնում դատական համակարգի մեջ, քանի որ Սահմանադրական դատարանի լիազորություններն ընդհանրապես ոչ մի կապ չունեն ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունների ու խնդիրների հետ, դրանց կազմավորման և գործունեության կարգերը էականորեն տարբերվում են միմյանցից, ուստի բոլորովին սխալ է այդ երկու մարմիններին մտցնել միևնույն համակարգի մեջ: Բացի այդ ՀՀ Սահմանադրական դատարանը պետական իշխանության մարմինների համակարգում գրավում է հատուկ տեղ, որի հիմնական գործառույթը սահմանադրական վերահսկողության իրականացումն է: Իսկ Սահմանադրական դատարանին առնչվող դրույթները ՀՀ Սահմանադրության «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխում տեղադրելը զուտ տեխնիկական խնդիր է, ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ Սահմանադրությունը նույն այդ 6-րդ գլխում դրույթներ է պարունակում Արդարադատության խորհրդի ու դատախազության վերաբերյալ:

«Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատական համակարգի մեջ մտնում են առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը:

Առաջին ատյանի դատարանները ՀՀ դատական համակարգի սկզբնական օղակն են, որոնք ըստ էության քննում են բոլոր քաղաքացիական (քացառությամբ տնտեսական դատարանի իրավասությանը վերապահված գործերի), քրեական, զինվորական, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, օրենքով սահմանված կարգով լուծում են կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցերը, ինչպես նաև օրենքով իրենց իրավասությանը վերապահված այլ լիազորություններ: ՀՀ-ում գործում են առաջին ատյանի տասնյոթ դատարան («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 13):

Փաստորեն, բոլոր քրեական, քաղաքացիական, զինվորական և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ անկախ հանցագործության ծանրությունից, պատճառված վնասի չափից, ներկայացված հայցագնի չափից, քննում են առաջին ատյանի դատարանները: Այս հանգամանքը բնականաբար մեր դատական համակարգի օգտին չի խոսում: Բազմաթիվ երկրներում դատական համակարգի ստորին օղակը տրոհված է երկու

<sup>1</sup>Տե՛ս ՀՀ դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Ս. Դիլբանդյան, Եր., 2000, էջ 47-48:

<sup>2</sup>Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Այվազյան, Եր., 2003, էջ 574-575:

մասի, որոնց մի մասին ենթակա են զանցանքների, առավել նվազ վտանգավորություն ունեցող հանցագործությունների, ոչ մեծ հայցագին ունեցող քաղաքացիական վեճերի վերաբերյալ գործերը, իսկ ահա մյուս դատարանները, որոնց կազմում գործում են արդեն պրոֆեսիոնալ դատավորներ, քննում են գործերի մյուս՝ հիմնական մասը: Սա թոթափում է առաջին ատյանի դատարանների հիմնական ցանցի կողմից քննվող գործերի շրջանակը, և հնարավորություն տալիս մյուս գործերը քննել ավելի խորը ու բազմակողմանի:

Բացի այդ, ՀՀ առաջին ատյանի դատարանները մինչդասական վարույթում անձի իրավունքների սահմանափակման, խափանման միջոցների կիրառման ու առանձին քննչական ու օպերատիվ-հետախուզական գործողությունների կատարման թույլտվություն են տալիս, ինչը կարող է հետագայում այդ նույն գործով դատարանի մոտ կանխակալ մոտեցում ստեղծել:

Այս հանգամանքներն էլ հաշվի առնելով՝ ՀՀ-ում նպատակահարմար կլինի ստեղծել հաշտարար կամ տեղական դատարաններ, որոնք էլ օրենքով սահմանված կարգով կքննեն զանցանքների, առավել նվազ վտանգավորություն ունեցող հանցագործությունների, ոչ մեծ հայցագին ունեցող քաղաքացիական վեճերի վերաբերյալ գործերը, ինչպես նաև կտան անձի իրավունքների սահմանափակման, խափանման միջոցների կիրառման ու առանձին քննչական ու օպերատիվ-հետախուզական գործողությունների կատարման թույլտվություն, իսկ այդ դատարանների որոշումները կբողոքարկվեն ոչ թե առաջին ատյանի դատարան, այլ վերաքննիչ դատարան:

ՀՀ առաջին ատյանի դատարաններում բոլոր գործերը քննվում են միանձնյա, ինչը նույնպես չի կարելի ճիշտ համարել: Պետության համար մեծ կարևորություն ունեցող առանձնապես բարդ գործերի քննությունը եթե մենք վերապահում ենք ընդամենը մեկ դատավորի, ապա նա օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չի կարողանում դրսևորել իր լավագույն որակները, շատ դեպքերում ուղղակի կատարում է պետության բարձրագույն պաշտոնատար անձանց հրահանգները, մյուս դեպքերում խուսափում է այնպիսի որոշումներ կայացնելուց, որոնք ցանկալի չեն նույն այդ անձանց համար: Իսկ եթե օրենքը նախատեսեր առաջին ատյանին ենթակա առանձնապես բարդ ու մեծ հնչեղություն ունեցող գործերի կոլեգիալ քննության հնարավորությունը, ապա ինչ-որ չափով դատավորների այդպիսի կախյալ վիճակը կթուլացվեր, բացի այդ կբարձրանար գործերի քննության արդյունավետությունը, քանի որ մեկ դատավորը, ինչքան էլ պրոֆեսիոնալ լինի, երաշխավորված չէ սխալներից, իսկ ահա երեք կամ հինգ դատավորների կազմով գործի քննության պայմաններում սխալի հավանականությունը գրեթե հասցվում է զրոյի: Իսկ ահա ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ, ունի հռչակագրային բնույթ և պրակտիկայում իրագործվել չի կարող նախ այն պատճառով, որ ՀՀ և ոչ մի օրենք դատավարությանը երդվյալների մասնակցության մասին վկայող որևէ հոդված չի պարունակում, և երկրորդ՝ մեր հասարակության իրավագիտակցության ու իրավադաստիարակության պայմաններում երդվյալների ինստիտուտը երբեք չի կարող արդարացնել իրեն:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը, միջազգային պայմանագրերի դրույթները հաշվի առնելով, ամրագրել է մարդկության կողմից առաջադիմական ճանաչված բազմաթիվ դատավարական ու դատարանակազմական սկզբունքներ, ինչպիսիք են՝ դատավորի անկախությունը և ենթարկվելը միայն օրենքին, մրցակցությունը, դատական քննության հրապարակայնությունը, դատավորների անձեռնմխելիությունը, անփոփոխելիությունը, սպաքաղաքականացվածությունը, հավասարությունը օրենքի և դատարանի առջև, գործերի արդարացի քննությունը, կրկնակի դատապարտման անթույլատրելիությունը, գործերի քննության անմիջականությունը, անընդհատությունը, անմեղության կանխավարկածը, իրավաբանական օգնության իրավունքը, պաշտպանության իրավունքը և այլ հանրաճանաչ սկզբունքներ:

ՀՀ-ում լուրջ քայլեր ձեռնարկվեցին դատարանի անկախությունը ամրապնդելու համար: Նախ՝ դատախազությունը զրկվեց դատարանում օրենքների ճիշտ և միատեսակ կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքից, ապա դատարանը զրկվեց քրեական

գործ հարուցելու իրավունքից և քրեական հետապնդման մարմնից վերաձվեց զուտ գործի լուծման ֆունկցիա իրականացնող մարմնի: Չնայած դրան՝ ներկայումս թե՛ դատավորների նյութական ու սոցիալական պաշտպանվածությունը, թե՛ նրանց պաշտոնի նշանակման ու ազատման կարգը բացասաբար են ազդում դատական մարմինների անկախության վրա:

Առաջադիմական պետք է համարել առաջին ատյանի դատարանների դատավճիռների, վճիռների և որոշումների բողոքարկման հնարավորության նախատեսումը:

Հենց այս իրավունքի իրականացման համար էլ ՀՀ-ում ստեղծվեցին վերաքննիչ դատարանները, որոնք վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի քննած գործերը կրկին անգամ ըստ էության քննող դատարաններն են («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 18):

Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքների փաստարկներով և կարող է գործը քննել լրիվ ծավալով:

Ներկայումս ՀՀ-ում գործում են երկու վերաքննիչ դատարան՝ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան և քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան:

Վերաքննիչ դատարանի նստավայրը Երևան քաղաքն է: Հարկ է նշել, որ այստեղ խախտվում է այնպիսի դատավարական սկզբունք, ինչպիսին է դատարանների մոտիկությունը բնակության վայրին<sup>1</sup>: Այսպիսի պայմաններում ՀՀ ծայրամասերի բնակչությունը ստիպված է լինում գալ Երևան նախ՝ վերաքննիչ բողոք բերելու համար, ապա՝ նաև դատաքննությանը մասնակցելու համար, իսկ վերաքննիչ դատարանում, որպես կանոն, դատաքննությունները մեկ նիստով չեն սահմանափակվում: Նպատակահարմար կլինեք օրենքում ամրագրել, որ ՀՀ վերաքննիչ դատարանը կարող է նստավայրեր ունենալ նաև առանձին մարզերում (ի դեպ տնտեսական դատարանին օրենքով այդ իրավունքը վերապահված է):

Վերաքննիչ դատարանում գործերը քննվում են երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է: Գործի կոլեգիալ քննությունը վերաքննիչ դատարանում բնականաբար բարձրացնում է գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտման հնարավորությունը:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռների, վճիռների, որոշումների արդյունավետ ստուգման համար կարևոր երաշխիք է այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործը քննում է լրիվ ծավալով: Սակայն վերաքննիչ դատարանի ազատությունը բացարձակ չէ: Մասնավորապես, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը իրավունք չունի այնպիսի դատավճիռ կայացնել, որով կծանրացնի ամբաստանյալի վիճակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հիմքով բողոք են բերել դատախազը, տուժողը, ինչպես նաև արդարացվածը՝ արդարացման հիմքերի հետ կապված:

ՀՀ-ում բարձրագույն դատական ատյանը վճռաբեկ դատարանն է, որը առաջին ատյանի դատարանների օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև վերաքննիչ դատարանների, տնտեսական դատարանի՝ վճիռների, դատավճիռների և որոշումների դեմ բերված վճռաբեկ բողոքների հիման վրա, դրանցում նշված հիմքերի սահմաններում, այդ ակտերը վերանայող դատարանն է («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21):

ՀՀ-ում գոյություն ունի մեկ վճռաբեկ դատարան, որը կազմված է՝ վճռաբեկ դատարանի նախագահից, քաղաքացիական և տնտեսական գործերով պալատից, ինչպես նաև քրեական և զինվորական գործերով պալատից:

Վճռաբեկ դատարանի յուրաքանչյուր պալատ կազմված է վճռաբեկ դատարանի պալատի նախագահից և պալատի հինգ դատավորներից:

Փաստորեն, վճռաբեկ դատարանի շնորհիվ դատավարության մասնակիցները ստանում են իրենց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Վճռաբեկ դատարանը գործերի քննությունը կատարում է և վճռաբեկության և հսկողական վարույթի կարգով:

Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝ քաղաքացիական դատավարությունում գործին մասնակցող անձանց նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը, քրեական

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, խմբ. Գ. Ղազինյան, Եր., 2005, էջ 364:



դատավարությունում դատավարության մասնկիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը, նոր ի հայտ եկած հանգամանքները, ինչպես նաև նոր հանգամանքները:

Եռօղակ դատական համակարգի պայմաններում ավելորդ պետք է համարել վճռաբեկ դատարանի կողմից հսկողական կարգով (բացառությամբ նոր ի հայտ եկած և նոր հանգամանքների) գործերի վերանայումը: Դատական որոշումների վերանայման այս ձևը բնութագրական էր խորհրդային դատական համակարգին, երբ բացակայում էր վերաքննությունը և դատական որոշումների վերանայման հիմնական ձևերն էին վճռաբեկ և հսկողական վարույթները: Արդարադատության մատչելիության սկզբունքից ելնելով, եթե գործը սահմանված կարգով վերանայվել է երեք դատական ատյաններում և կայացված դատական որոշումը մտել է օրինական ուժի մեջ, ապա այն պետք է ի կատար ածվի: Հսկողական կարգով դատական որոշման վերանայումը սպառնալիքի տակ է դնում վերջինիս կայունությունը, որը՝ որպես արդարադատության իրականացման սկզբունք, կարևորագույն նշանակություն ունի: Հսկողական վարույթի նախատեսումը զգալի վնաս է հասցնում նաև քաղաքացիական հայցին, քանի որ դատարանի որոշումը քաղաքացիական հայցի վերաբերյալ նույնպես անմիջապես ի կատար է ծվում:

Վճռաբեկ դատարանը իրավունք չունի փոփոխել առաջին ատյանի դատարանների, տնտեսական դատարանի, վերաքննիչ դատարանների դատավճիռները, վճիռները և գործն ըստ էության լուծող մյուս որոշումները, այլ իրավասու է այդ ակտերը թողնել անփոփոխ կամ բեկանել դրանք և ուղարկել առաջին ատյանի, տնտեսական կամ վերաքննիչ դատարան նոր դատաքննության, իսկ քրեական գործերով՝ նաև լրացուցիչ նախաքննության:

Այսօր իրավաբանական գրականության մեջ և պրակտիկ աշխատողների կողմից առաջարկություններ են արվում վճռաբեկ դատարանին դատավճիռներ, վճիռներ որոշումներ փոփոխելու իրավունք վերապահելու մասին, ինչը, նրանց կարծիքով, կկանխի գործերի գոյություն ունեցող շրջապատույտը: Սա, մեր կարծիքով, հարցի լուծման հաջող տարբերակ չէ: Այս հարցը պետք է լուծել հետևյալ կերպ: Նախ՝ պետք է բարձրացվեն դատավորների իրավագիտակցությունն ու իրավական գիտելիքների պաշարը, որպեսզի դատական սխալների հավանականությունը և, հետևաբար, բեկանվող դատական ակտերի քանակը հնարավորինս նվազեցվի, և երկրորդ՝ պետք է փոխվի հասարակության վերաբերմունքը դատական համակարգի նկատմամբ: Այսօր դատավարության մասնակիցները տեղի-անտեղի բողոքարկում են դատական ակտերը, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է դատական համակարգի նկատմամբ հասարակության դրսևորած անվստահությամբ:

Այսօր վճռաբեկ դատարանը՝ որպես ՀՀ բարձրագույն դատական ատյան, չունի լիազորությունների այն ծավալը, որը նախկինում ուներ ԽՍՀՄ Գերագույն դատարանը: Այդ լիազորությունների մի մասը որոշակի ձևափոխություններով այսօր տրված է դատարանների նախագահների խորհրդին:

Դատարանների նախագահների խորհուրդը կազմված է վճռաբեկ դատարանի, նրա պալատների, վերաքննիչ դատարանների և առաջին ատյանի դատարանների նախագահներից: Դատարանների նախագահների խորհրդի նախագահն է վճռաբեկ դատարանի նախագահը («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26):

Դատարանների նախագահների խորհուրդը ամփոփում է դատական պրակտիկան և դրա հիման վրա տալիս է օրենքների կիրառման խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, իրավասու պետական մարմիններին առաջարկություններ է ներկայացնում օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ, օրենքով նախատեսված դեպքերում դիմում է ՀՀ Նախագահին օրենքների, ԱԺ որոշումների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ Սահմանադրական դատարան դիմելու միջնորդությամբ, ինչպես նաև իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Այս լիազորությունները չափազանց մեծ նշանակություն ունեն դատական համակարգի բնականոն գործունեությունը կարգավորելու համար, քանի որ դատարանների նախագահների խորհուրդը, ամփոփելով դատական պրակտիկան, ավելի լավ է ծանոթանում

օրենքներում առկա թերություններին ու բացերին, պրակտիկայում օրենքների կիրառման հետ կապված այլ խնդիրներին և ապա տալիս է խորհրդատվական պարզաբանումներ: Այս լիազորության արդյունավետությունը բարձրացնելու համար ճիշտ կլիներ, որ պարզաբանումները նախկինի նման լինեին ղեկավար բնույթի: Համապատասխան իրավական ակտեր ընդունելու համար իրավասու մարմինների համար օժանդակիչ մեծ նշանակություն կարող են ունենալ դատարանների նախագահների խորհրդի առաջարկությունները: Իսկ դատարանները՝ որպես իրավակիրառ մարմիններ, տարբեր նորմատիվ իրավական ակտերում հայտնաբերելով Սահմանադրության հետ ունեցած հակասություններ, փաստորեն, դատարանների նախագահների խորհրդի միջոցով հնարավորություն են ունենում դիմելու ՀՀ Նախագահին հարցին ընթացք տալու առաջարկությամբ:

ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ ՀՀ-ում գործում են նաև տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ: Ինչպես տեսնում ենք ՀՀ դատական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում, այսպես կոչված, մասնագիտացված դատարանները: Սահմանադրական վերոնշյալ դրույթի ուժով էլ 2001թ. տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը դադարեցրեց իր գործունեությունը, և նրա փոխարեն կազմավորվեց տնտեսական դատարանը: Ընդհանրապես, մասնագիտացված դատարանների կազմավորման ու գործունեության միջազգային փորձը վկայում է այդ դատարանների գործունեության արդյունավետության մասին: Այս դեպքում գործերը քննվում են կոնկրետ որոշակի բնագավառին վերաբերող իրավական վեճերի լուծման գործում մասնագիտացած դատավորների կողմից, որոնք հնարավորություն են ունենում տարեցտարի էլ ավելի կատարելագործել իրենց մասնագիտական որակները:

ՀՀ տնտեսական դատարանը ըստ էության քննում է բոլոր տնտեսական վեճերը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով իր իրավասությանը վերապահված այլ գործեր:

Բոլոր տնտեսական վեճերն առաջին անգամ ըստ էության քննվում են միանձնյա: Վճռաբեկ դատարանի բեկանած վճիռներով տնտեսական գործերը, բացառությամբ սնանկության գործերի և օրենքով նախատեսված այլ գործերի, ՀՀ տնտեսական դատարանում քննվում են դատավորների կոլեգիալ կազմով: Տնտեսական դատարանի վճիռը կարող է բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով: Տնտեսական դատարանի նստավայրը Երևանն է: Տնտեսական դատարանը կարող է նստավայրեր ունենալ նաև առանձին մարզերում («Դատարանակազմության մասին» օրենք, ՀՀ հոդվ. 20.1):

ՀՀ-ում տնտեսական դատարանի ստեղծման համար, բացի սահմանադրական նորմից, հիմք հանդիսացավ տնտեսական հարաբերությունների բուռն զարգացումը: Տնտեսական դատարանը հնարավորություն է տալիս արագ և առավել արդյունավետ քննել տնտեսական վեճերը:

Կարծում ենք, վաղուց հասունացել է ՀՀ-ում նաև զինվորական, աշխատանքային և վարչական դատարանների ստեղծման անհրաժեշտությունը, ընդ որում, բոլոր դատարանների համար բարձրագույն ատյանը պետք է լինի ՀՀ վճռաբեկ դատարանը:

ՀՀ դատական համակարգի ներկա վիճակը ավելի բազմակողմանի պատկերացնելու համար անդրադառնանք նաև դատական համակարգի կազմավորմանը:

ՀՀ Սահմանադրության 94-րդ և 95-րդ հոդվածները, ինչպես նաև «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքը կարգավորում են Արդարադատության խորհրդի կազմավորման ու գործունեության կարգը: ՀՀ Սահմանադրությունը այս խորհրդին բացառիկ լիազորություններ է վերապահել դատական համակարգի կազմավորման գործում: Ընդ որում, աչքի է ընկնում արդարադատության նախարարի չափազանց ակտիվ դերը Արդարադատության խորհրդի գործառույթների իրականացման ընթացքում: Մասնավորապես, արդարադատության նախարարի առաջարկով Արդարադատության խորհուրդը կազմում և ՀՀ Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները: Արդարադատության խորհուրդը առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և

դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածությունները, եզրակացություն է տալիս արդարադատության նախարարի ներկայացրած մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ: Իսկ վերոնշյալ բոլոր դատավորներին նշանակում է ՀՀ Նախագահը (Սահմանադրության 55-րդ հոդվ., 11-րդ կետ):

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը անփոփոխելի է և պաշտոնավարում է մինչև իր 65 տարին: «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը ամրագրում է, որ դատավորի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հարցով խորհրդին է դիմում արդարադատության նախարարը, ընդ որում, դատավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերն են՝ օրինականության կոպիտ խախտում թույլ տալը և դատավորի կոչմանը անհամատեղելի արարք կատարելը:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությունում և «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքում ամրագրված են մի շարք դրույթներ, որոնք մթազնում են թե՛ դատավորների անկախության, թե՛ դատավորների անփոփոխելիության սկզբունքները: Դա է ապացուցում նաև այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ-ում ձեռնարկված սահմանադրական բարեփոխումների գործընթացի խնդիրներից մեկն էլ Արդարադատության խորհրդի կազմավորման ու գործունեության կարգը փոփոխության ենթարկելն է: Մեր կարծիքով, պետք է լուրջ փոփոխությունների ենթարկվեն թե՛ դատավորի նշանակման, թե՛ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը: Այս առումով հաջողված ենք համարում կոալիցիայի առաջարկած սահմանադրական բարեփոխումների նախագիծի Արդարադատության խորհրդին վերաբերող հատվածը, որը սահմանել է մի շարք առաջադիմական դրույթներ: Նախ խորհրդի կազմավորման գործընթացում նախագիծը լայն լիազորություններ է տվել ԱԺ-ին, իսկ ՀՀ Նախագահը արդարացիորեն ընդհանրապես չի մասնակցում խորհրդի կազմավորմանը ու գործունեությանը, երկրորդ՝ դատավորների նշանակումը կատարվում է խորհրդի առաջարկության հիման վրա ՀՀ Նախագահի կողմից և երրորդ՝ դատավորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է բացառապես Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա:

«Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքը դրույթներ է պարունակում դատավորների պաշտոնեական պիտանիության ցուցակներում ընդգրկվելու համար պարտադիր ցենզերի վերաբերյալ, մասնավորապես, այդ ցուցակներում ընդգրկվում են դատարանների այն դատավորները, ովքեր մասնագիտական, գործնական և բարոյական հատկանիշներով համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին և բարձրագույն իրավաբանական կրթություն 25 տարին լրացած ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն իրավաբանի առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ և կարող են աշխատել որպես դատավոր: Կարծում ենք, տարիքային և մասնագիտական ստաժին վերաբերող ցենզերը պետք է փոփոխության ենթարկվեն, քանի որ այսպիսի պայմաններում տեսականորեն 25 տարեկան և երեքամյա աշխատանքային փորձ ունեցող իրավաբանին կարող են վստահել մարդկանց ճակատագրերը լուծելու հարցը, և անձը, ինչքան էլ իր գործի մասնագետը լինի, չի կարողանա դրսևորել իր լավագույն որակները, իսկ դատարանը ոչ ոքի համար չի կարող ծառայել որպես փորձ ձեռք բերելու տեղ, այլ ձեռք բերված փորձը պետք է ծառայի դատական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Մյուս կողմից առաջադիմական ենք համարում այն մոտեցումը, որ օրենսդիրը կարևորում է դատավորների մասնագիտական, գործնական և բարոյական հատկանիշները, որոնք ոչ պակաս կարևոր են դատական համակարգը կատարելագործելու համար:

Իսկ ահա դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվում են պաշտոնեական պիտանիության ցուցակներում տեղ գտած այն անձինք, ովքեր իրենց մասնագիտական, գործնական և բարոյական հատկանիշներով արժանի են առաջխաղացման:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում բացի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններից կարող են ստեղծվել նաև օրենքով սահմանված այլ դատարաններ: Այս հոդվածը, ինչպես նաև «Միջնորդ դատարանների և

միջնորդ դատավարության» մասին ՀՀ օրենքը հիմք հանդիսացան ՀՀ-ում մշտապես գործող միջնորդ դատարանների ստեղծման համար:

Բացի այդ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության» մասին օրենքի առաջին հոդվածը նախատեսում է նաև կոնկրետ վեճը լուծելու համար միանգամյա (ad hoc) միջնորդ դատարան ստեղծելու իրավունքը:

Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրաարդյունաբերական պալատներին, բորսաներին, հրապարակային աճուրդներ իրականացնող կազմակերպություններին, ՀՀ բանկերի վարչությանը և այլ կազմակերպություններին առընթեր: Ներկայումս ՀՀ-ում գործում են մշտապես գործող երեք միջնորդ դատարան՝ ՀՀ բանկերի միությանը առընթեր, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին առընթեր և ՀՀ արդյունաբերողների ու գործարարների միությանը առընթեր:

Ներկայումս ամբողջ աշխարհում մեծանում է միջնորդ դատարանների՝ որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության արտադատական կամ այլընտրանքային ձևը: Միջնորդ դատարանների հիմնական նպատակը դատավարության մասնակիցներին հաշտեցնելն է և միայն անհաջողության մատնվելուց հետո են նրանք ձեռնամուխ լինում գործի քննությանն ու լուծմանը:

Միջնորդ դատավարության ինստիտուտը առավել արժեքավորվում է ձեռնարկատիրական հարաբերությունների ոլորտում առաջացող վեճերը լուծելու հարցում: Առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հնարավորություն են ունենում շուտափույթ ներգրավվել դատական քննությանը և առանց դատական քաջքշուկների ու ավելորդ ժամանակ ծախսելու ստանալ իրավական վեճերի լուծումը:

Միջնորդ դատավարության ինստիտուտը, ինչքան էլ առաջադիմական լինի, ՀՀ-ում մեծ տարածում չունի: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. նախ՝ անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք դեռևս անհրաժեշտ տեղեկատվություն չունեն միջնորդ դատարան դիմելու հնարավորության և միջնորդ դատավարության առավելությունների մասին, երկրորդ՝ ՀՀ-ում դեռևս պատշաճ մակարդակով չեն ձևավորվել քաղաքակիրթ շուկայական հարաբերություններ, երրորդ՝ ՀՀ օրենսդրությունը ունի ակնհայտ թերություններ և չորրորդ՝ օտարերկրյա անձինք վստահություն չեն տածում ՀՀ-ում մշտապես գործող միջնորդ դատարանների կողմից գործերի որակյալ լուծման նկատմամբ, որովհետև միջնորդ դատարանների անվանացանկերում ներգրավված դատավորների ճնշող մեծամասնությունը օժտված չեն համապատասխան մասնագիտական գիտելիքներով, չեն տիրապետում միջազգային լեզուներին, չունեն համապատասխան պրակտիկ փորձ<sup>1</sup>:

Դատարանի կայացրած ակտը ինչքան էլ օբյեկտիվ ու անհրաժեշտ լինի, մեծամասամբ այն կմնա թղթի վրա և պրակտիկայում չի իրագործվի: Այդ իսկ պատճառով ՀՀ-ում ստեղծվեց դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, որի անմիջական խնդիրն էլ հենց հանդիսանում է դատական ակտերի հարկադիր կատարումը:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, որ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը պետք է գործի ոչ թե արդարադատության նախարարության կազմում, այլ դատարաններին առընթեր, քանի որ այդպես խախտվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը: Մեր կարծիքով, այս տեսակետը առարկայազուրկ է ու չհիմնավորված: Նախ, եթե դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը գործի դատարաններին կից, ապա դատարանները ավելորդ կծանրաբեռնվեն այս ծառայության բնականոն աշխատանքը կարգավորելու պարտականությամբ և, երկրորդ՝ այժմ գործող վիճակը ոչ մի ձևով չի հակասում իշխանությունների տարանջատման սկզբունքին, քանի որ դատարանը կատարողական վարույթի ընթացքում օժտված է բավարար լիազորություններով, որպեսզի կարողանա ապահովել կատարողական մարմինների կողմից դատական ակտերի բարեդճորեն ճիշտ կատարումը:

<sup>1</sup>Տե՛ս Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Ռ. Գ. Պետրոսյան, Եր., 2003, էջ 697-698:

## Եզրափակիչ մաս

Այսպիսով, ինչպես տեսանք, դատական համակարգերի կազմակերպման ու գործունեության չորս մոդելներից (անգլոսաքսոնական, ռոմանագերմանական, սոցիալիստական, մուսուլմանական) ՀՀ-ն ընտրել է ռոմանագերմանական մոդելը, որտեղ դատական համակարգերը հիմնականում եռաստիճան կամ քառաստիճան են, աչքի են ընկնում բազմազանությամբ, հատկապես դատարանակազմության հարցերում, ինչպես նաև գործառությանը տարանջատումը հստակ է (ըստ էության քննություն, վերաքննություն, վճռաբեկություն):

Սակայն, մեր կարծիքով, բոլորովին կարևոր չէ, թե ինչ դատական համակարգ կընտրի այս կամ այն երկիրը, կարևոր չէ նույնիսկ օրենսդրության կատարյալ լինելու հարցը, կարևորն այն է, որ դատավորները՝ որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտներ, ունենան բարձր մասնագիտական որակներ, աշխատանքային երկարաժամկետ ստաժ և, որ պակաս կարևոր չէ, բարոյական անթերի հատկանիշներ, իսկ հասարակությունը վստահի դատական համակարգին և ոչ մի վայրկյան չկասկածի դատավորի անկողմնակալությանն ու օբյեկտիվությանը: Իսկ ինչ վերաբերում է ոչ կատարյալ օրենսդրությանը, ապա դատավորը իր մասնագիտական որակներով կծածկի օրենքի բացերն ու թերությունները, և արդարադատության հիմքերը դրանից ամենևին չեն տուժի:

Մեր երկրում ի սկզբանե սխալ հունով ընթացած բարեփոխումները, թերի օրենսդրությունը, որոշ ոչ գրագետ դատավորների առկայությունը խարխուլեցին երկրի դատական համակարգի հիմքերը, հասարակության մեջ սերմանեցին անվստահություն դեպի արդարադատություն իրականացնող միակ մարմնի՝ դատարանի նկատմամբ, իսկ խաթարված վստահությունը վերականգնելու գործընթացը կտևի ոչ թե տարիներ, այլ տասնամյակներ: Իսկ այդ նպատակին հասնելու համար ոչ միայն պետք է գործող օրենսդրությունը կատարելագործել, այլ նաև բարձրացնել դատավորների ու հասարակության իրավագիտակցությունն ու իրավադաստիարակությունը:

Ներկայումս մեր հանրապետությունում սկսվել և մեծ թափ է առել սահմանադրական բարեփոխումների ծրագիրը, որի մի մասն էլ առնչվում է դատական համակարգին: Դատական համակարգում, անշուշտ, փոփոխելու շատ բան կա, և կատարյալ դատական համակարգ ստեղծելու համար մենք դեռ երկար պետք է աշխատենք:

Մեր կարծիքով, հենց այսպիսի գիտական աշխատանքներն էլ ինչ-որ չափով պետական իրավասու մարմիններին կօժանդակեն անկախ և անկողմնակալ դատական համակարգ ստեղծելու գործում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. 1995թ. հունիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն
2. 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
3. 1998թ. հունիսի 18-ին ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք
4. 1998թ. հունիսի 17-ին ընդունված «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք
5. 1998թ. հունիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
6. 1998թ. հունիսի 17-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
7. 1995թ. հոկտեմբերի 23-ին ընդունված «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենք
8. 1998թ. մայիսի 5-ին ընդունված «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենք
9. 1995թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք
10. 1998թ. մայիսի 5-ին ընդունված «Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ՀՀ օրենք
11. 1998թ. մայիսի 5-ին ընդունված «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք
12. 1998թ. հունիսի 1-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենք

13. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Այվազյան, Եր., 2003
14. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Գիլբանդյան Ս., Եր. 2000,
15. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, խմբագրությամբ Գ. Ղազինյանի, Եր., 2005,
16. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Պետրոսյան Ռ., Եր., 2003
17. Մարդու իրավունքներ, Այվազյան Վ., Եր., 2002
18. Պետության և իրավունքի տեսություն, Վ. Խրոպանյուկ, թարգմանությամբ՝ Խ. Հարությունյանի, Եր., 1997

## Ներածություն

Գեայի ժողովրդավարություն տանող ճանապարհին առանձնահատուկ տեղ ունի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Յուրաքանչյուր պետություն իր հերթին որոշակի պարտականություններ է կրում նշված ոլորտում, որոնք մի կողմից՝ ամրագրված են միջազգային իրավական փաստաթղթերով, իսկ մյուս կողմից՝ տվյալ պետության ներպետական օրենսդրությամբ: ՀՀ-ն ևս՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, և ժողովրդավարական սկզբունքներին անվերապահորեն հետևելուն միտված քաղաքականություն որդեգրած պետություն, իր միջազգային պարտականությունների շարքում ստանձնել է նաև մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության պարտականությունը, որը թերևս ամենակարևորն է: Բացի դրանից, ՀՀ-ը մարդու իրավունքները և ազատությունները, ինչպես նաև դրանց արդյունավետ իրացման և պաշտպանության մեխանիզմները սահմանող մի շարք ներպետական օրենսդրական ակտեր ունի, որոնցից գլխավորը և առաջնայինը ՀՀ Սահմանադրությունն է:

Մեր պետությունը միացել է նաև մի շարք միջազգային կոնվենցիաների, որոնցով ևս սահմանվում է իրավունքներ ու ազատություններ, դրանց իրացման և պաշտպանության մեխանիզմները: Որպես օրինակ կարող են ծառայել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական, և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և այլն: Համաձայն Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերը համարվում են ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասը: Ուստի, նշված ոլորտին վերաբերող ներպետական և ՀՀ կողմից վավերացրած միջազգային իրավական ակտերը միասին կազմում են մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանման իրավական երաշխիքները:

Սակայն վերոշարադրյալից չի հետևում, թե պետությունները կամ միջազգային հանրությունը սոսկ սահմանում են մարդու իրավունքներն ու ազատությունները կամ դրանց պաշտպանության մեխանիզմները: Յուրաքանչյուր ոք չէ, որ օրինապահ է, կամ անշեղորեն հետևում է օրենքի պահանջներին: Ուստի, բնական է, որ պետության մեջ օրենքներ են խախտվում: Նույնքան բնական է նաև նման խախտում թույլ տվողների որոշակի իրավունքների սահմանափակումը, որը հիմնականում տեղի է ունենում քրեական դատավարության միջոցով: Բացի այդ, պրակտիկայում շատ հաճախ են լինում դեպքեր, երբ հակասություններ են առաջ գալիս տարբեր պետական (լինի օրենսդիր, թե գործադիր) մարմինների միջև: Հենց այստեղ էլ կարևորվում է դատական իշխանության դերը, որը կոչված է ապահովելու քաղաքացիների իրավունքների ու ազատությունների համակողմանի պաշտպանությանը, ինչպես նաև լուծելու օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին միջև ծագող հակասությունները<sup>1</sup>: Ինչևէ, առաջ անցնելով նշենք, որ դատական իշխանության՝ որպես իշխանության առանձին և ինքնուրույն ճյուղի և դատական համակարգին վերաբերող մի շարք հարցերի պարզաբանումը և քննարկումը դարձել է հրամայական պահանջ, քանզի հարափոփոխ հասարակական հարաբերությունների պայմաններում խիստ անհրաժեշտ է ճիշտ որոշել դրանց տեղն ու դերը, ինչպես նաև առաջ քաշել դատական համակարգի բարեփոխման և ժողովրդավարացման ուղիների վերաբերյալ նոր հայեցակարգեր: Եթե դրան հավելենք, որ մեր պետությունն այսօր գտնվում է սահմանադրական բարեփոխումների եռուզեռում (բնականաբար, փոփոխություններ են նախատեսվում նաև դատական իշխանության առնչմամբ), առավել քան ակնհայտ է դառնում նշյալ հարցերի պարզաբանման անհրաժեշտությունը: Բացի դատական իշխանության և դատական համակարգի վերաբերյալ քննարկումներից, կարևոր է նաև խնդրո առարկա դաճնել ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրական ակտերը,

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003, էջ 542-543:

ինչպես նաև սույն թեմային առնչվող միջազգային իրավական ակտերը: Առաջինների շարքին են դասվում «Դատարանակազմության մասին» 1998թ., «Դատավորի կարգավիճակի մասին» 1998թ. և այլ օրենքներ, երկրորդների շարքին՝ 1985թ. դեկտեմբերի 13-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները», ինչպես նաև «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգերը»:

Նշված հարցերի շրջանակներում էլ կկատարվի մեր այս փոքրիկ ուսումնասիրությունը, որի վերջնական և հիմնական միտվածությունը դատական համակարգի զարգացման և հեղինակության բարձրացման ուղիների կատարելագործման եղանակների սահմանումն է:

## **Նկարագրական մաս**

### **Դատական իշխանությունը և դատական համակարգը ՀՀ-ում**

Դատական իշխանությունը, հանդիսանալով իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա գործող իշխանության անկախ ճյուղ, նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ (գլուխ 6): Սակայն դատական իշխանության հասկացության սահմանադրական բնորոշումը բացակայում է: Փոխարենը, այն առկա է իրավաբանական գրականության մեջ: Եվ այսպես, ինչպես արդեն նշել ենք, դատական իշխանությունը դա քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները համակողմանի պաշտպանող, պետության օրինաստեղծ և գործադիր իշխանության մարմինների միջև առաջացող հակասությունները լուծող իշխանության բոլորովին առանձին և անկախ ճյուղ է: Սակայն միաժամանակ դատական իշխանությունը սերտորեն կապված է իշխանության այլ ճյուղերի հետ, ինչը չի հակասում վերջինիս անկախության սկզբունքին:

Դատական իշխանության հետ անմիջականորեն կապված է արդարադատության իրականացումը, որը համաձայն Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ վերապահված է միայն դատարաններին: Սակայն «արդարադատություն» հասկացության բնորոշումը Սահմանադրությունը չի տալիս: Այդ բնորոշումը տալիս է «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, համաձայն որի՝ «արդարադատությունը ՀՀ-ում իրականացվում է՝

1. մարդու և քաղաքացու ազատությունները, իրավունքներն ու օրինական շահերը, պետության և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը շոշափող քաղաքացիական, տնտեսական վեճերի վերաբերյալ գործեր դատական նիստերում քննելու և լուծելու միջոցով,
2. վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու միջոցով,
3. դատական նիստերում հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելու, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ օրենքով սահմանված պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու միջոցով»<sup>1</sup>: Ինչպես հետևում է օրենքի այս հոդվածից, արդարադատությունը դատարանների գործունեության բովանդակությունն է, հիմնական ուղղվածությունը:

Սահմանադրությամբ նշվում են նաև դատական իշխանության որոշ ընդհանուր սկզբունքներ: Դրանցից կարելի է նշել, օրինակ, դատական մարմինների անկախությունը և ապաքաղաքականացվածությունը: Գործող Սահմանադրությունը որպես դատական մարմինների անկախության երաշխավորում է դիտում ՀՀ Նախագահին (հոդված 94), իսկ Սահմանադրության փոփոխությունների տարբերակը՝ Սահմանադրությունը և օրենքները: Դատական մարմինները պետք է բնութագրվեն իրական անկախությամբ, միայն որի դեպքում տվյալ պետությունում բարձր կլինի դատական համակարգի հեղինակությունը: Պետական բոլոր մյուս մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի

<sup>1</sup> Տե՛ս «Դատարանակազմության մասին» 1998թ.-ի ՀՀ օրենքը:



գործողությունների կատարումից, որոնք կդիտվեն որպես միջամտություն դատական մարմինների գործունեությանը: Դեռ ավելին դատական իշխանության մարմինը պետք է հանդես գան իշխանության այլ մարմինների անիրավաչափ գործողությունները կանխողի դերում: Դատական մարմինների անկախության սկզբունքից բխում է նաև այն, որ դատարաններն իրենց հանձնված գործերը քննում են և լուծում միայն փաստերի հիման վրա և առաջնորդվելով օրենքով: Դատարանները չպետք է հաշվի առնեն նաև ուղղակի կամ անուղղակի սպառնալիքները կամ միջամտությունը՝ անկախ այն բանից, թե դրանք ում կողմից են կատարվում (ի դեպ ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներ քրեական պատասխանատվություն են նախատեսում նման արարքների համար: Օրինակ, ՀՀ քր. օր.-ի 332-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացմանը և քննությունը խոչընդոտելու համար, 434-րդ հոդվածը՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար և այլն):

Ելնելով դատական մարմինների անկախության սկզբունքի ունիվերսալ (համընդհանուր) բնույթից և ծայրաստիճան կարևորությունից՝ միջազգային իրավունքը նույնպես այդ սկզբունքը ամրագրող նորմեր է նախատեսել: Մասնավորապես, հանցագործությունների կանխմանը և իրավախախտումների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից ընդունված (1985թ.) «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները», որը միջազգայնորեն ամրագրում է դատական մարմինների անկախության սկզբունքը, ինչպես նաև պարզաբանում դրա հետ կապված մի շարք այլ հարցեր<sup>1</sup>: Իսկ մի այլ՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգեր» վերտառությունը միջազգային իրավական ակտը կարգավորում է սույն սկզբունքի կիրառման հետ առնչվող հարաբերությունները:

Բացի միջազգային իրավական ամրագրումից, դատական մարմինների անկախության սկզբունքը սահմանված է նաև ներպետական օրենսդրությամբ: Համաձայն «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին»: Իսկ «Դատավորների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն էլ ավելի է մանրամասնեցնում նշված դրույթը. «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին»:

Արդարադատություն իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի:

Դատավորի պատասխանատվության հիմքերը և կարգը սահմանվում են օրենքով»:

Դատական մարմինների գործունեության հաջորդ կարևոր սկզբունքը դրանց ապաքաղաքականացված լինելն է: Այն նախատեսված է Սահմանադրության 98-րդ հոդվածում: Դատավորը՝ ի դեմս դատական իշխանությունը կրող չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ (այս կանոնը վերաբերվում է նաև Սահմանադրական դատարանի անդամին): Այսպիսի սահմանափակման արդարացիությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ անհրաժեշտ է գործեր քննելու ընթացքում և ընդհանրապես դատարանը զերծ պահել քաղաքական բնույթի ճնշումներից: Բացի Սահմանադրությունից, դատավորի ապաքաղաքականացվածության մասին դրույթ է պարունակում նաև «Դատավորների կարգավիճակի մասին» օրենքը (հոդված 8):

Թվարկված սկզբունքներից գատ, ըստ մեզ, կարևոր նշանակություն ունի նաև օրինականության սկզբունքը, որի էությունը կայանում է նրանում, որ դատական մարմիններն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են առաջնորդվել Սահմանադրությամբ, օրենքներով և ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով և անվերապահորեն կատարել դրանց պատվիրանները: Այս սկզբունքի նորմատիվային բովանդակության մեջ կարելի է ներառել հետևյալ տարրերը.

1. Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին և օրենքներին հետևելու և դրանցով առաջնորդվելու պարտականությունը,

<sup>1</sup> Տե՛ս Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ, ՄԱԿ 1985թ., կետ 4-20:

2. դատական պրակտիկայում նախադեպային իրավունքի կիրառման անթույլատրելիությունը,

3. սովորության իրավունքի նորմերի կիրառման անթույլատրելիությունը (բացառությամբ որոշակի դեպքերի, օրինակ՝ գործարար շրջանառության սովորույթների կիրառում<sup>1</sup>) և այլն:

Օրինականության սկզբունքն իր իրավական ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրությունում և «Դատարանակազմության մասին» օրենսգրքում: Այսպես, Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացում են միայն դատարանը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»: «Դատարանակազմության մասին» օրենքի 6-րդ հոդվածը Սահմանադրության և օրենքների հետ միասին նշում է նաև ՀՀ միջազգային պայմանագրերը: Պարզ է դառնում, որ դատական իշխանության մարմինը, բացի նշված ակտերից, իրենց գործունեության ընթացքում չեն կարող որևէ այլ աղբյուրից օգտվել: Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ-ում դեռևս չի գործում նաև նախադեպային իրավունքի ինստիտուտը, որը հիմնականում բնորոշ է անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող պետություններին (օրինակ՝ Անգլիա, ԱՄՆ և այլն):

Դատական մարմինների գործունեության սկզբունքների հարցը որոշակիորեն պարզաբանելուց հետո անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ՀՀ դատական համակարգին և դրա հետ առնչվող մի շարք հարցերին: Նախքան դրանց անդրադառնալը՝ կարևոր է պարզել «դատական համակարգ» հասկացության էությունը: Իրավաբանական գրականության մեջ այն ընկալվում է որպես դատական իշխանության մարմինների համակարգ<sup>2</sup>: ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև մյուս նորմատիվ իրավական ակտերը, սակայն անմիջականորեն չեն տալիս «դատական համակարգ» հասկացության սահմանումը, այլ ընդամենը սահմանափակվում են դրա տարրերը թվարկելով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ-ում ընդհանուր իրավասության դատարաններն են առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Նույն հոդվածը ամրագրում է նաև տնտեսական, զինվորական և օրենքով նախատեսված այլ դատարանների ստեղծումը, իսկ արտակարգ դատարանների ստեղծումը հիմնական օրենքն արգելում է: Այնուհետև, «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի՝ «Հայաստանի Հանրապետության դատական համակարգը» վերտառությամբ 10-րդ հոդվածը որոշակիացնում է Սահմանադրության հիշյալ նորմը և նշում, որ ՀՀ-ում գործում են առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Ինչպես տեսնում ենք, դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության մաս կազմող այս օրենքը սահմանում է ՀՀ դատական համակարգի եռաստիճան կառուցվածքը: Նախկինում ՀՀ-ում գործում էր երկաստիճան (ժողդատարան և գերագույն դատարան) դատական համակարգը: Ընդ որում, դատական նոր համակարգը (եռօղակ) տարբերվում է նախկինից թե՛ գործունեության սկզբունքով և թե՛ հատկապես ձևավորման եղանակով: Եթե նախկինում դատավորներն ընտրվում էին, ապա այժմ նրանք նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից: (Ի դեպ, դատավորների ընտրովիության սկզբունքին դեմ է նաև Գ. Մ. Խաչատրյանը)<sup>3</sup>: Սակայն դա չի նշանակում, թե դատավորների նշանակովիության սկզբունքն ավելի արդարացված են, քան ընտրովիությունը: Չարգացած շատ երկրներում գործում է ընտրովիության սկզբունքը (օրինակ՝ ԱՄՆ-ի նահանգային և Շվեյցարիայի կանտոնային դատարանը): Ինչևէ, խնդրո առարկա չդարձնելով դատավորի նշանակովիության կամ ընտրովիության սկզբունքը՝ փաստենք, որ «Դատարանակազմության մասին» օրենքը ոչ միայն սահմանում է ՀՀ դատական համակարգը, այլև առանձին հոդվածներով կարգավորում է դրանցից յուրաքանչյուրի հետ կապված կազմակերպական և այլ հարաբերությունները: Նույնաբովանդակ նորմեր Սահմանադրությունը չի պարունակում և դա բնական է, քանի որ Սահմանադրությամբ կարգավորվում են դատական իշխանությանն առնչվող առավել կարևոր իրավահարաբերությունները:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 7:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003, էջ 546:

<sup>3</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մ. Գ. Խաչատրյան, Գ. Մ. Խաչատրյան, դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2002, էջ 20:

## Առաջին ատյանի դատարան

ՀՀ դատական համակարգի ամենաստորին օղակը կազմում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, որոնք տեղաբաշխված են ՀՀ ողջ տարածքում: Այս դատարաններին է նվիրված «Դատարանակազմության մասին» օրենքի 2-րդ գլուխը: Համաձայն այդ օրենքի 13-րդ հոդվածի՝ առաջին ատյանի դատարանն ըստ էության քննում է բոլոր քաղաքացիական, տնտեսական, քրեական, զինվորական և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, օրենքով սահմանված կարգով լուծում է կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվություն, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցերը: Առաջին ատյանի դատարանն իրավասու չէ քննել այն տնտեսական վեճերը, որոնք օրենքով վերապահված են տնտեսական դատարանին: Առաջին ատյանի դատարանի՝ թվարկած լիազորությունների ցանկը սպառիչ չէ, այսինքն՝ այդ դատարաններն իրականացնում են նաև օրենքով իրենց վերապահված այլ լիազորություններ ևս: Այդպիսիք կարող են սահմանվել քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

ՀՀ-ում օրծում են առաջին ատյանի 17 դատարան, որոնցից 10-ը՝ մարզերում, իսկ 7-ը՝ Երևան քաղաքում: Նրանց դատական տարածքը համարվում է տվյալ մարզի, Երևան քաղաքում տվյալ համայնքի(ների) վարչական տարածքը, իսկ նստավայրը գտնվում է նույնպես նշված վարչական տարածքներում:

Առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանի կազմում ընդգրկված են նախագահը և որոշակի թվով դատավորներ, որոնց թիվը մարզերի և Երևան քաղաքի համայնքների համար տարբեր է: Օրենքը առաջին ատյանի դատարանի նախագահին օժտել է հետևյալ լիազորություններով՝ հետևում է դատարանի աշխատանքային կարգապահությունը, դատավորներին տրամադրում է արձակուրդ, իրականացնում է դատարանի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը, տնօրինում է դատարանի ֆինանսական միջոցները և այլն<sup>1</sup>: Սակայն առաջին ատյանի դատարանի նախագահն իր լիազորություններն իրականացնելիս չի կարող որևէ կերպ կաշկանդել դատավորներին արդարադատություն իրականացնելիս և առավել ևս ազդել նրանց անկախության վրա: Օրենքով նախատեսված է նաև առաջին ատյանի յուրաքանչյուր դատավորի համար դատական նիստերի քարտուղարի և օգնականի մեկական հաստիքներ:

## Վերաքննիչ դատարան

Այս դատարանի հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Դատարանակազմության մասին» օրենքի 3-րդ գլխով (18-20-րդ հոդվածներ), ինչպես նաև քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով: Համաձայն «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի քննած գործերը կրկին անգամ ըստ էության քննող դատարանն է: Վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահված չսահմանափակվել վերաքննիչ բողոքում բերված փաստարկների շրջանակներում և գործը քննել ըստ էության (ինչպես և առաջին ատյանի դատարանը): Մինչև տնտեսական դատարանի կազմավորում ՀՀ-ում գործում էին 3 վերաքննիչ դատարան՝ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, տնտեսական գործերով վերաքննիչ դատարան, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Այժմ գործում են միայն քաղաքացիական և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանները, որոնց դատական տարածքը ՀՀ ողջ տարածքն է, իսկ նստավայրը գտնվում է Երևան քաղաքում: Վերաքննիչ դատարանի կազմում ևս ընդգրկված են նախագահը և որոշակի թվով դատավորներ, ընդ որում վերաքննիչ դատարանների նախագահների լիազորությունները գրեթե նույնն են, ինչ

<sup>1</sup> Առավել մանրամասն տե՛ս. ՀՀ «Դատարանակազմության մասին օրենքի» 16-րդ հոդվածը:

առաջին ատյանի դատարանների նախագահներին: Վերաքննիչ դատարանի յուրաքանչյուր դատավոր ունի մեկ օգնական, իսկ յուրաքանչյուր 3 դատավորի համար նախատեսված է դատական նիստերի քարտուղարի մեկ հաստիք: Ինչ վերաբերվում է վճիռների, դատավճիռների և գործն ըստ էության լուծող մյուս որոշումների օրինական ուժի մեջ մտնելուն, ապա պետք է նշել, որ ի տարբերություն առաջին ատյանի դատարանի նույնատիպ ակտերի, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակելուց 15 օր հետո (ՀՀ քաղ. դատ. օր. 140-րդ հոդված), վերաքննիչ դատարանի դեպքում օրենքը որոշ առանձնահատկություն է մտցրել: Այսպես, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 219-րդ հոդվածի վերաքննիչ դատարանի վճիռներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 15 օր հետո: Իսկ քրեական և զինվորական գործերով վերջնական ակտերը ուժի մեջ են մտնում վճարել բողոք բերելու համար սահմանված ժամկետն անցնելուց հետո: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվածներ 402 (1) 412 (1)-ի՝ նման ժամկետ է սահմանված 10 օրը:

Այսինքն՝ եթե առաջին ատյանի կայացրած բոլոր վերջնական որոշումների դեմ վերաքննիչ բողոք է բերվում 15 օրվա ընթացքում, ապա վերաքննիչ դատարանի համանման ակտերի դեմ վճարել բողոք է բերվում 15 օրվա ընթացքում, եթե քաղաքացիական գործերով է կայացվել, և 10 օրվա ընթացքում, եթե քրեական ու զինվորական գործերով են կայացվել:

Բացի այդ, եթե անցել է առաջին ատյան դատարանի դատավճիռները, վճիռները և որոշումները բողոքարկելու համար օրենքով սահմանված 15 օրյա ժամկետը, ապա վերաքննիչ բողոքը չի ընդունվում: Սակայն, եթե վերաքննիչ դատարանի ակտերն են վճարելության կարգով բողոքարկվում, ապա հնարավոր են նաև դեպքեր, երբ դրանք օրինական ուժի մեջ մտած լինեն և վճարել բողոքն ընդունվի:

### **Վճարել դատարան**

ՀՀ դատական համակարգի վերջին օղակը վճարել դատարանն է: Վճարել դատարանն առաջին ատյանի դատարանի, տնտեսական դատարանի և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների և գործն ըստ էության լուծող մյուս վերջնական որոշումների, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և գործն ըստ էության լուծող մյուս վերջնական որոշումների դեմ բերված վճարել բողոքների հիման վրա այդ ակտերը վերանայող դատարանն է՝ վճարել բողոքում նշված հիմքերի սահմաններում<sup>1</sup>: ՀՀ-ում գործում է մեկ վճարել դատարան, որի նստավայրը Երևան քաղաքն է, իսկ դատական տարածքը՝ ՀՀ ողջ տարածքը: Վճարել դատարանը, լինելով նաև մեկ միասնական մարմին, կազմված է պալատներից և վճարել դատարանի նախագահից: Պալատները թվով երկուսն են՝ քաղաքացիական և տնտեսական գործերով պալատ և քրեական ու զինվորական գործերով պալատ: Ընդ որում, յուրաքանչյուր պալատ ունի իր նախագահն, ինչպես նաև հինգ դատավոր: Գործող օրենսդրությամբ կարգավորված են նաև վճարել բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմի, ինչպես նաև նման բողոքի հիմքերի մասին հարցերը: Այսպես, համաձայն Սահմանադրության 93-րդ հոդվածի՝ օրինական ուժի մեջ մտած (ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի) դատական վերջնական ակտերը վճարելության կարգով կարող են բողոքարկվել միայն գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող և վճարել դատարանում գրանցված փաստաբանի կողմից: Իսկ օրինական ուժի մեջ չմտած վերաքննիչ դատարանի վերջնական որոշումները վճարել դատարան կարող են բողոքարկել կողմերը (դատապարտյալը, արդարացվածը, մեղադրողը, տուժողը և այլն):

Վճարել բողոքի հիմքերի առումով պետք է նշել, որ օրենսդրությամբ բավականին նեղացվել են դրանց շրջանակը և այժմ վճարել բողոք կարող է բերվել հետևյալ դեպքերում՝

1. քաղաքացիական դատավարության ընթացքում գործին մասնակցող անձանց նյութական կամ դատավարական իրավունքների խախտման,

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003, էջ 549:

2. քրեական դատավարության ընթացքում նշված անձանց նյութական կամ դատավարական իրավունքների խախտման,

3. նոր ի հայտ եղակ հանգամանքների:

Վճռաբեկ դատարանի նախագահին օրենքով վերապահվել են որոշակի լիազորություններ այնպես, ինչպես և առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին: Այսպես, վճռաբեկ դատարանի նախագահը լիազորված է հետևելու դատավորների աշխատանքային կարգապահությանը, նրանց տրամադրել արձակուրդ, տնօրինել դատարանի ֆինանսական միջոցները, գրանցել հատուկ արտոնագիր ունեցող փաստաբաններին և այլն: Նա միաժամանակ հանդես է գալիս որպես դատավոր: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական ու տնտեսական և քրեական ու զինվորական գործերով պալատները ղեկավարում են պալատների նախագահները, որոնց իրավասությունն է վճռաբեկ դատարանի նախագահի հանձնարարությամբ վարել պալատի նիստը, իսկ վերջինիս բացակայության ընթացքում՝ ժամանակավորապես իրականացնել նրա լիազորությունները («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 7, 24): Վճռաբեկ դատարանի յուրաքանչյուր դատավորի համար օրենքով սահմանված է մեկ օգնականի հաստիք, իսկ յուրաքանչյուր պալատի՝ դատական նիստերի քարտուղարի և գործավարի և մեկական հաստիքներ:

Ներկայացնելով ՀՀ դատական համակարգը կազմող առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը՝ ըստ մեզ, անհրաժեշտ է նաև ներկայացնել տնտեսական դատարանը, որը կարելի է համարել ՀՀ դատական համակարգի նոր օղակ և որի ստեղծման հնարավորությունը նախատեսված է Սահմանադրությամբ (հոդված 92): Տնտեսական դատարանի ստեղծման փոփոխությունների ենթարկվեց «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքը, որը լրացվեց «Տնտեսական դատարանը» վերտառությամբ 3<sup>1</sup> գլխով՝ իր 20<sup>1</sup>, 20<sup>2</sup>, 20<sup>3</sup> հոդվածներով: Համաձայն նշված օրենքի 20<sup>1</sup> հոդվածի՝ «Տնտեսական դատարանն ըստ էության քննում է բոլոր տնտեսական վեճերը, ինչպես նաև ՀՀ քաղ. դատ. օր.-ով և այլ օրենքներով իր իրավասության վերապահված այլ գործեր»: Տնտեսական դատարանի իրավասությանը վերապահված գործերի հիմնական ցանկը բերված է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 16-րդ հոդվածում: Տնտեսական դատարանը կազմված է նախագահից և 21 դատավորներից: Այս դատարանը որոշ նմանություններ ունենալով առաջին ատյանի դատարանի հետ (գործերի միանձնյա քննում, վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո և այլն)՝ միաժամանակ էականորեն տարբերվում է նրանից: Եթե առաջին ատյանին վերջնական որոշումները բողոքարկվում են վերաքննության կարգով, ապա տնտեսական դատարանի նման որոշումները բողոքարկվում են միայն վճռաբեկության կարգով: Այս դեպքում տնտեսական վեճը քննվում է կոլեգիալ կարգով: Տնտեսական դատարանի ստեղծումը հիմք ծառայեց, որպեսզի լուծարվի տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ յուրաքանչյուրն իրեն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում: Այս առումով բացառություն չի կազմում սահմանադրական արդարադատության իրականացումը, որի սուբյեկտը համարվում է Սահմանադրական դատարանը: Ուստի, ըստ մեզ, քննարկելով դատական համակարգի առանձին օղակները՝ արդարացված կլինի այդ համատեքստում պարզաբանել նաև Սահմանադրական դատարանին առնչվող որոշ հարցեր: Օժտված լինելով առավել մեծ կարևորությամբ՝ այս ինստիտուտը ևս առաջին հերթին կարգավորվում է Սահմանադրությամբ: Որպես գործունեության հիմնական սկզբունք Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի անդամների համար առանձնացնում է նրանց անկախությունը, այնուհետև ապաքաղաքականացվածությունը, որոնց էությունը գրեթե նույնն է, ինչ որ ընդհանուր իրավասության դատարանների դատավորների անկախության էությունը:

Սահմանադրական դատարանը կազմված է 9 անդամներից, որոնք պաշտոնավարում են մինչև 70 տարեկան դառնալը: Նրանցից հինգին նշանակում է Ազգային Ժողովը, իսկ չորսին՝ հանրապետության Նախագահը: Սահմանադրությամբ սահմանվում է նաև Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, որը, ըստ

մեզ, չափազանց նեղ է: Այսպես, Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեն հանրապետության Նախագահը, պատգամավորների առնվազն 1/3-ը, հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրության արդյունքների հետ կապված վեճերով և կառավարությունը՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված դեպքում (Սահմանադրություն 101-րդ հոդված): Սահմանադրության 59-րդ հոդվածը վերաբերում է հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունները կատարելու անհնարինության մասին ԱԺ-ի կողմից որոշում ընդունելու համար Սահմանադրական դատարանի եզրակացություն տալուն:

Սակայն պետք է ուրախությամբ փաստել, որ 2005թ. մայիսի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունված սահմանադրական փոփոխությունների նախագիծը (հեղինակ՝ իշխող քաղաքական կոալիցիա, ՕԵՆ, ՀՅԴ, ՀՀԿ): Բավականին ընդլայնել է Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններին, յուրաքանչյուր անձի, եթե առկա է դատարանի վերջնական ակտը և վիճարկվում է կիրառված օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը, Մարդու իրավունքների պաշտպանը, դատարանները և գլխավոր դատախազը:

Համաձայն Սահմանադրության 100-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրական դատարանին վերապահված են հետևյալ լիազորությունները, որոշում է օրենքների, ԱԺ որոշումների, հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրագրերի, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, որոշում է միջազգային պայմանագրերում ամրագրված պարտականությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը դրանք վավերացնելուց առաջ, եզրակացություն է տալիս հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի վերաբերյալ, որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին և այլն: Սահմանադրական դատարանը ստացած ղիմումները քննում է 30-օրյա ժամկետում, որից հետո ընդունում է որոշումներ և եզրակացություններ, որոնք վերջնական են և վերանայման ենթակա չեն:

ՀՀ դատական համակարգի առանձին օղակներ սահմանելուց զատ, մեր օրենսդրությունը նախատեսում է նաև արդարադատություն իրականացնող մարմիններին օժանդակող կառույցների ստեղծումը: Որպես այդպիսին կարելի է դիտել Արդարադատության խորհուրդը, որի նախագահն է հանդիսանում ՀՀ Նախագահը, իսկ փոխնախագահներ՝ արդարադատության նախարարը, գլխավոր դատախազը, ինչպես նաև դատարանների նախագահների խորհուրդը, որն ի թիվս այլ կարևոր լիազորությունների, իրականացնում է նաև դատավորների մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը, և որի նախագահն է համարվում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը: Նշված կառույցները հիմնականում ունեն խորհրդատվական բնույթ: Այս երկու մարմիններից զատ արդարադատություն իրականացնող մարմիններին օժանդակում են նաև ԳԱՀԿ ծառայությունը, քրեակատարողական հիմնարկները, հետաքննության մարմինները, քննչական մարմինները և այլն<sup>1</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ դատական համակարգը, դրա առանձին օղակները, ինչպես նաև այդ ոլորտը կարգավորող օրենսդրությունը, կարելի է հստակորեն եզրակացնել այն, որ բոլոր օրենսդրական ակտերն ուղղված են նախ և առաջ դատական համակարգի կայացմանը և, իհարկե, հետագա կատարելագործմանը: Այդ առումով պետք է նշել, որ օրենսդրությունը մշակելիս հաշվի է առնվել միջազգային փորձը՝ խստիվ պահպանելով մեր ազգային յուրահատկությունները և բնորոշ գծերը:

Թվում է, թե այդ պարագայում սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը պետք է դինամիկորեն արձագանքեն հասարակական հարաբերությունների մշտառկա փոփոխություններին: Դրանով է պայմանավորված մի շարք օրենքներում, որոնք ապահովում են դատաիրավական բարեփոխումների հաջող գործընթացը, կատարված բազմաթիվ փոփոխությունները, ինչը վկայում է իրավական ակտերի նշված հարաբերության

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003, էջ 568:

մասին: Իսկ փոփոխությունների նմանօրինակ առատությունը, ըստ մեզ, պետք է բացատրել ՀՀ անցումային շրջանի պետություն լինելու հանգամանքով: Սակայն հասարակական հարաբերությունները առավել կանոնակարգված ձևով կարգավորող իրավական ակտեր ունենալը դեռևս բավարար չէ կայացած և հեղինակավոր դատական համակարգ ունենալու համար: Ավելի շուտ դա նման դատական համակարգ ունենալու նախադրյալներից է: Իրականում անհրաժեշտ է նաև այդ օրենքը խստորեն պահպանել և դրանում ամրագրված պատվիրանները վեր դասել առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի շահերից: Իսկ դրա համար, ըստ մեզ, անհրաժեշտ է ունենալ կրթված, դատական համակարգին քաջատեղյակ և բարոյական բարձր նկարագիր ունեցող կադրեր (դատական համակարգի զարգացման հեռանկարները կքննարկվեն հաջորդ բաժնում):

Ինչևիցե, ի մի բերելով ասվածը՝ կարելի է վստահորեն փաստել, որ ՀՀ-ում դատական համակարգը կայացած է, սակայն դեռևս բազում խնդիրներ կան ծառայած այդ համակարգի առջև, իրական անկախության ամրապնդում, հեղինակության բարձրացում, ինչպես նաև պայքար դատական համակարգում այդքան տարածված կոռուպցիայի դեմ: Այս ամենին հասնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է ամենօրյա հետևողական պայքար և սրտացավություն՝ դեպի մեր՝ այդքան թանկ գնով ձեռք բերված ազգային պետականությունը:

### **Դատական իշխանությունը և դատական համակարգն ըստ սահմանադրական փոփոխությունների**

Ներկա ժամանակաշրջանում ՀՀ գտնվում է սահմանադրական փոփոխությունների խիստ եռուզեռում: ԱԺ-ում քննարկվում է երկրի հիմնական օրենքի փոփոխությունների տարբերակը: Ինչպես հայտնի է, առաջարկվել էր սահմանադրական փոփոխությունների 3 տարբերակ՝ իշխող քաղաքական կոալիցիայի ՄԱ, կուսակցությունն և Ազգային ժողովրդավարների դաշինք կուսակցության կողմից: Սակայն 2005թ. մայիսի 11-ին ԱԳ-ում առաջին ընթերցմամբ ընդունվեց իշխող քաղաքական կոալիցիայի կողմից ներկայացված սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որի շրջանակներում էլ կկատարվեն մեր քննարկումները: Սահմանադրական փոփոխությունների այս նախագիծը, ի թիվս պետության համար կարևորություն ունեցող այլ հարցերի, փոփոխություններ է նախատեսում նաև դատական իշխանության ոլորտում: Այդ փոփոխությունները նախ և առաջ վերաբերում են Արդարադատության խորհրդին, որը գործող Սահմանադրության համաձայն՝ առաջադրում է յուրաքանչյուր դատավորների թեկնածությունը, եզրակացություն է տալիս արդարադատության նախարարի կողմից առաջադրված մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ (95-րդ (3) հոդված): Համաձայն սահմանադրական փոփոխությունների նախագծի՝ փոփոխվել է Արդարադատության խորհրդի կազմը: Այսպես, դրանցում նախատեսվում է այլևս չընդգրկել գլխավոր դատախազին, այլ դատախազներին և արդարադատության նախարարներին՝ նպատակ ունենալով առանձնացնել դատական իշխանությունը գործադիրից: Իսկ խորհուրդը շարունակում է ղեկավարել հանրապետության Նախագահը՝ միաժամանակ պահպանելով դատավորներին նշանակելու իր լիազորությունը: Փոփոխությունների արդյունքում, փաստորեն, ՀՀ Նախագահը միանձնյա է նշանակում դատավորներին, քանի որ Արդարադատության խորհուրդն այլևս իրավասու չէ առաջարկել դատարանների թեկնածուները: Ըստ մեզ, սա դատական համակարգի անկախության դեմ ուղղված մի դրույթ է, որով ավելացվում է Նախագահի կողմից իշխանության այս թևի վրա ճնշումների հնարավորությունը: Ինչպես ևս գործող Սահմանադրությունը, այնպես էլ փոփոխությունների տարբերակով Արդարադատության խորհուրդը ընդունում է որոշումներ և եզրակացություններ:

Փոփոխություններ են նախատեսված նաև Սահմանադրական դատարանին վերաբերող նորմերում: Նախ և առաջ ամրագրվել է, որ ՀՀ-ում սահմանադրական արդարադատություն իրականացնում է Սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանի անդամը հավասարեցվել է ընդհանուր իրավասության դատարանների

դատավորներին ինչպես տարիքային ցեմգով (2 դեպքում էլ նախատեսված է 65 տարին), այնպե՛լ էլ անձեռնմխելիությունից օգտվելու առումով: Կարևոր փոփոխություն է նախատեսվում նաև Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմում, ինչի մասին արդեն խոսվել է: Հուսով ենք, որ մինչև Սահմանադրական փոփոխությունները հանրաքվեի դնելը ՀՀ ԱԺ-ում այն մանրամասն վերլուծության կենթարկվի, միջազգորեն փորձի ուսումնասիրմամբ կհատակեցվեն դրա դրույթները և որպես արդյունք ժողովրդի դատին կներկայացվի ժողովրդական ստանդարտներին համարող և մարդու իրավունքներն ու ազատությունները գերագույն արժեք ճանաչող մի փաստաթուղթ:

## Եզրափակիչ մաս

### Դատական համակարգի զարգացման հեռանկարները

Մեր այս փոքրիկ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՀՀ դատական համակարգը թեև կարգավորում է ինչպես երկրի գլխավոր օրենքով, այնպես էլ ընթացիկ օրենսդրությամբ, սակայն, այնուամենայնիվ, դեռևս շատ խոչընդոտներ ունի հաղթահարելու: Ծիշտ է, այդ համակարգի կայացման և արդունավետ գործելու համար ստեղծվել են բավարար իրավական երաշխիքներ, բայց խնդիրները շարունակում են գոյություն ունենալ: Իրավական երաշխիքների առումով հատկապես կարևորում ենք երկրում ծայր առած սահմանադրական փոփոխությունների ալիքը, քանզի դեռևս անհայտ է, թե ինչպիսին կլինի փոփոխված Սահմանադրությունը և, հետևաբար, դատական իշխանությունն ու դատական համակարգին առնչվող հարաբերությունները ինչպիսի սահմանադրաիրավական կարգավորում կստանան: Սակայն մի բան պարզ է. պետք է նախանշել որոշակի ուղիներ, սահմանել որոշակի սկզբունքներ, որոնց միջոցով կիրականացվի դատական համակարգի հետագա կատարելագործումը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին կլինի Սահմանադրության փոփոխությունների վերջնական տարբերակը: Այսինքն՝ նշված միջոցները պետք է լինեն համընդհանուր բնույթի, որպեսզի կիրառելի լինեն ինչպես ներկայումս, այնպես էլ հետգայում կատարվելիք տարբեր փոփոխությունների դեպքում: Ի լրումն նշենք, որ մեր կողմից ներկայացվող միջոցները կարող են օգտակար լինել դատական համակարգի զարգացման, այլ ոչ թե կայացման համար, քանի որ մենք համարում ենք ՀՀ դատական համակարգը կայացած: Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ դատական համակարգը կարելի է զարգացնել հետևյալ միջոցներով.

- Դատական իշխանության իրական անկախության ամրապնդում: Սա ամենից առաջ վերաբերում է դատական իշխանության անկախությանը իշխանության գործադիր թևից: Գործող Սահմանադրության համաձայն՝ արդարադատության նախարարը Արդարադատության խորհրդի փոխնախագահն է և իրավասու է առաջարկելու դատավորների թեկնածուներ: Այս դեպքում, կարծում ենք, խոսել դատական համակարգի անկախության մասին անիմաստ է: Սահմանադրական փոփոխությունների նախագիծը կարծես լրացնում է այդ բացը՝ խորհրդի կազմից հանելով արդարադատության նախարարին, դատախազներին: Սակայն անհրաժեշտ է նաև խորհրդի կազմից հանել հանրապետության Նախագահին, իսկ խորհրդի նախագահ ընտրվի խորհրդի կազմից: Այսպիսով կբացառվի նաև դատական համակարգի կախվածությունը ՀՀ Նախագահից: Դատական համակարգը պետք է անկախ լինի արդարադատություն իրականացնելիս, ինչպես նաև գերծ լինի միջամտություններից: Այս դեպքում խնդիրը կարելի է լուծել ոչ միայն իրավական ուղիներով, այլև հասարակական գիտակցության վրա ներազդելու տարբեր միջոցներով:

- Վարչական դատարանների ստեղծում: ՀՀ-ում հիմք կդրվի վարչական արդարադատության իրականացմանը և, հետևաբար, անհրաժեշտություն կառաջանա ընդունել «Վարչական դատավարության օրենսգիրք»: Ներկայումս առաջին ատյանի դատարանները իրավասություն ունեն քննելու որոշ վարչական գործեր, ինչպես նաև դրանցով բերված բողոքներ: Սակայն, ըստ մեզ, անհրաժեշտ է ստեղծել մի դատական



ատյան, որը նախ և առաջ լինի մասնագիտացված և քննի բացառապես վարչական գործեր: Վարչական դատարանների ստեղծումը կարելի է հիմնավորել այն հանգամանքով, որ այս ոլորտում առավել հաճախ են խախտվում մարդու իրավունքները: Բացի այդ, այս ոլորտում վերջնական ակտերի գերակշիռ մասը գործի լրիվ օբյեկտիվ քննման արդյունքներ չեն կայացվում, այլ կախված են պաշտոնատար անձի կամքից:

• Դատավորների վերապատրաստման մասնագիտացված հաստատությունների հիմնումը:

Ներկայումս դատավորների ուսուցման և վերապատրաստման հետ կապված խնդիրները կարգավորում են դատարանների նախագահների խորհուրդը («Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 11): Սակայն նման գործունեության առավել արդյունավետ իրականացման համար հարկավոր է թեկուզ և հենց նույն դատարանների նախագահներին խորհրդի կազմում ստեղծել մասնագիտացված հաստատություն, որտեղ կդասավանդեն մեր դատավորներից ընտրված լավագույն կադրերը՝ անվճարովի աշխատանքի սկզբունքով: Նման հաստատության առանձնահատկությունը կարելի է դիտել նրանում, որ այնտեղ կարող են սովորել իրավաբանական կրթություն ունեցող և դատավոր դառնալու ցանկություն ունեցող ցանկացած ոք, ինչպես նաև կարող են վերապատրաստվել գործող դատավորները: Բացի այդ, ըստ մեզ, կարելի է նաև նման հաստատությունը գերազանցությամբ ավարտած ուսանողներին (որոնք իրենց գերազանց կդրսևորեն նաև պրակտիկայում) ընդգրկել դատավորների պաշտոնական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ցուցակներում: Ուսուցումը ոչ դատավորների համար կարելի է կազմակերպել տեսական և պրակտիկ առումով՝ հավասարության սկզբունքով:

• Պայքար կոռուպցիայի դեմ: Կոռուպցիան մի ահագնացող վտանգ է, որն օրեցօր անթույլատրելի չափերի է հասնում: Այն չի խնայել նաև դատական համակարգը և դրա դեմ պայքարը հենց այս ոլորտում խիստ արդիական է: Կոռուպցիայի՝ դատական համակարգում արմատավորվելու փաստը ունի մի շարք պատճառներ: Դրանցից կարելի է նշել, օրինակ, դատավորներին նյութապես անապահովված լինելը: Համեմատած եվրոպական երկրների հետ՝ ՀՀ դատավորների աշխատավարձերը կարելի է չնչին համարել: Այնուհետև նման պատճառների շարքին պիտի դասել հասարակության կողմից ինչպես իրենց իրավունքներին, այնպես էլ ընթացիկ օրենսդրությանն անտեղյակ լինելը: Եթե մեր նշած առաջին պատճառի դեմ պայքարելու համար անհրաժեշտ են պետական մոտեցում և հոգաժողություն, իսկ ավելի կոնկրետ պետական բյուջեի՝ նշված մասով ծախսերի ավելացում (այսպիսի մոտեցում մեր պետությունը արդեն իսկ որդեգրել է), ապա երկրորդ պատճառի դեմ պայքար անհամեմատ ավելի հեշտ է և դյուրին: Մասնավորապես, ներգրավելով հասարակության ակտիվ սեկտորին, կարելի է ՀՀ տարբեր մասերում կազմակերպել սեմինարներ, որոնց ընթացքում մարդկանց կբացատրվեն իրենց իրավունքների, ազատությունների էությունը, ինչպես նաև կպարզաբանվի տարբեր ոլորտները կարգավորող ընթացիկ օրենսդրությունը: Խիստ կարևոր քայլ է նաև բնակչության շրջանում հակակոռուպցիոն տրամադրությունների խորացումը: Այս ամենին հասնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է լուրջ աշխատանք, ինչպես նաև համագործակցություն տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

Ինչևէ, հուսանք, որ հետագայում կատարվելիք փոփոխությունները կլինեն միայն դրական և կնպաստեն մեր դատական համակարգի զարգացմանը և, վերջին հաշվով, Հայաստանի Հանրապետության շենացմանը, քանզի զարգացած դատական համակարգ ունենալը վկայում է ժողովրդավար պետություն և բարեկեցիկ կյանք տանող դժվարին ուղիում հաստատապես արված քայլի մասին:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ 1995թ. Սահմանադրություն
2. ՀՀ Սահմանադրական փոփոխությունների նախագիծ (հեղինակ՝ իշխող քաղաքական կոալիցիա)
3. «Դատարանակազմության մասին» ՀՀ 1998թ. օրենքը
4. «Դատավորի կազմավիճակի մասին» ՀՀ 1998թ.-ի օրենքը
5. Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ, ՄԱԿ 1985թ.

6. Գատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգեր, ՄԱԿ
7. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է ԱԺ կողմից 1998թ.-ի մայիսի 5-ին
8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է ԱԺ կողմից 1998թ.-ի հունիսի 17-ին
9. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է ԱԺ կողմից 1998թ.-ի հուլիսի 1-ին
10. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է ԱԺ կողմից 2003թ.-ի ապրիլի 18-ին
11. ՀՀ Սահմանադրական իրավունք, պատասխանատու խմբագիր Ն. Ա. Այվազյան, Եր., 2003
12. Մ. Գ. Խաչատրյան, Գ. Մ. Խաչատրյան, Գատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2002

«Դատական համակարգ. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները  
Հայաստանի Հանրապետությունում թեմայով իրավաբան ուսանողների  
հանրապետական 1-ին գիտաժողով

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների Ասոցիացիա հասարակական կազմակերպություն  
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ Արդարադատության նախարարությունում, որպես հասարակական կազմակերպություն, գրանցվել է 1995թ. մարտի 14-ին: 1997թ.-ի մայիսի 23-ին, 1999թ.-ի դեկտեմբերի 14-ին և 2002թ.-ի դեկտեմբերի 27-ին վերագրանցվել է: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը, որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված իրավաբանական գիտելիքների զարգացմանն ու տարածմանը:



«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա հասարակական կազմակերպությունը հանդիսանում է «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների գիտաժողովի համակազմակերպիչ: Էլեկտրոնյաին փոստ՝ [ayla@ayla.am](mailto:ayla@ayla.am):

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ



Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀ իրավաբանական ԲՈՒՀ-երի և ԲՈՒՅ-երի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական ԲՈՒՀ-երի և ԲՈՒՅ-երի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հանդիսանում է «Սահմանադրական բարեփոխումները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների գիտաժողովի համակազմակերպիչ: Էլեկտրոնյաին փոստ՝ [info@lawfoundation.am](mailto:info@lawfoundation.am):



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ**

**ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ**

ՀԵԻԱ-ի իրավաբան ուսանողների բաժանմունքը հիմնադրվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի որոշմամբ և հանդիսանում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կառուցվածքային ստորաբաժանունը: Իրավաբան ուսանողների բաժանմունքի հիմնադիր համաժողովը տեղի է ունեցել 2004թ.-ի ապրիլի 23-ին: Իրավաբան ուսանողների բաժանմունքն իր շարքերում միավորում է ավելի քան 20 պետական և ոչ պետական իրավաբանական ԲՈՒՀ-երում և ԲՈՒՅ-երի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների: Իրավաբան ուսանողների բաժանմունքի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրավաբան ուսանողների ինքնակազմակերպմանը և իրավաբանական ԲՈՒՀ-երում և ԲՈՒՅ-երի իրավաբանական ֆակուլտետներում իրավաբանական կրթության որակի բարձրացմանը, դասավանդման արդի մեթոդների արմատավորմանը և իրավաբանական կրթության զարգացմանը, ինչպես նաև նպաստել փաստաբանական ինստիտուտի զարգացմանն ու կայացմանը: Իրավաբան ուսանողների բաժանմունքը հանդիսանում է «Սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական առաջին գիտաժողովի համակազմակերպիչ: Ժողովի համակազմակերպիչ: Էլեկտրոնյաին փոստ՝ [isd@ayla.am](mailto:isd@ayla.am):